նում, մէկը՝ թիւ 469, Զմմառի վանքի գրադարանում, երկուսը՝ թիւ 521, Երուսաղէմի Սուրբ Յակոբեանց վանքի գրադարանում, մէկը՝ թիւ 5458, Լոնդոնում՝ Բրիտանական թանգարանում եւ եւս մէկը՝ թիւ 229, Ֆրանսիայի ազգային գրադարանում: Ըստ դարերի՝ «Տարեգրքի» ընդօրինակութիւնների դասդասումը հետեւեալն է. ԺԳ.-ԺԴ. դդ.՝ 1, ԺԴ.-ԺԵ. դդ.՝ 1, ԺԶ. դ.՝ 2, ԺԹ. դ.՝ 10 օրինակ: Տարբեր ընդօրինակութիւններում բուն «Տարեգրքի» կամ շարունակութեան աւարտի թուականները հետեւեալ պատկերն ունեն. 1272 թ. աւարտուող օրինակների թիւը՝ 1, 1327 թ.՝ 1 (պատառիկ), 1331 թ.՝ 12:

Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» ձեռագրերի ճիւղագրութիւնը



ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԸ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԻ ԱՆՑՈՒՄԸ ՊԱՀԼԱՒՈՒՆԻՆԵՐԻՆ

Կարէն Սաթեւոսեան

Անիի Բագրատունեաց թագաւորութեան պատմութիւնը հանգամանօրէն ուսումնասիրուել է հիմնականում քաղաքական իրադարձութիւնների տեսանկիւնից, իսկ ԺԱ. դարի 20-40-ական թուականների դէպքերը՝ յատկապէս պետութեան արտաքին յարաբերութիւնների համատեքստում, քանի որ այդ ճգնաժամային շրջանն ի վերջոյ աւարտուեց թագաւորութեան անկմամբ՝ Անիի բիւզանդական զաւթումով: Շատ հետաքրքրական էր նաեւ այդ ժամանակաշրջանում Անիի՝ հասարակական յուզումներով ու հակասութիւններով լի ներքաղաքական կեանքը: Յիշեալ իրադարձութիւնների ժամանակ առաջնային դեր բաժին ընկաւ Հայոց եկեղեցուն եւ նրա առաջնորդ Պետրոս Ա (յետագայում՝ Գետադարձ մականուանուած) կաթողիկոսին (1019-1054 թթ.):

Յայտնի է, որ կաթողիկոսական աթոռի վրայ Պետրոսին յաջորդեց քրոջ որդին՝ հէնց նրա ձեռքով օծուած Խաչիկ Ա Անեցին (1054-1065 թթ.): Դրանից յետոյ բիւզանդացիները փորձեցին արգելել նոր կաթողիկոսի ընտրութիւնը, սակայն հայ ազնուականութեան ջանքերով այն տեղի ունեցաւ, եւ կաթողիկոս դարձաւ Պահլաւունեաց տոհմից Գրիգոր Մագիստրոսի որդի Վահրամը՝ ձեռնադրութեան ժամանակ ստանալով Գրիգոր անունը, իսկ աւելի ուշ՝ Վկայասէր մականունը (1066-1105 թթ.): Նրա աթոռակալութեամբ Հայոց կաթողիկոսների յաջորդականութեան մէջ տեղի ունեցաւ մի էական փոփոխութիւն. կաթողիկոսական աթոռը համարուեց տոհմական, եւ Պահլաւունիները, ովքեր ներկայանում էին իբրեւ Հայոց առաջին հայրապետ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի տոհմակիցներ, սկսեցին ժառանգականութեան սկզբունքով բազմել կաթողիկոսական գահին: Այդ երեւոյթը շարունակուեց շուրջ մէկուկէս դար:

Ներկայ ուսումնասիրութիւնը նուիրուած է այն խնդրին, թէ ինչպէս դեռեւս ԺԱ. դարի 20-40-ական թուականներին Անիի թագաւորութեան մէջ կարեւոր դիրքի հասած Պահլաւունեաց իշխանական տոհմի ներկայացուցիչները նպատակադրուած շարժում սկսեցին կաթողիկոսական աթոռին տիրելու համար: Կարելի է ասել, որ այն մի ուշագրաւ հեռագնայ ծրագիր էր՝ իր որոշակի դրդապատճառներով ու հիմնաւորումներով: Ուղղակի եւ անուղղակի փաստերը ցոյց են տալիս, որ այդ գործընթացի նախահիմքերը դրեցին Անիի թագաւորութեան ազդեցիկ գործիչներ սպարապետ Վահրամ Պահլաւունին եւ նրա եղբայր Աբլղարիբ մարզպանը, իսկ բուն ծրագրի հեղինակը վերջիններիս եղբօրորդի Գրիգոր Մագիստրոս Պահլաւունին էր:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԻ ԹՈՒԼԱՑՈՒՄԸ ՊԵՏՐՈՍ Ա-Ի ԺԱՄԱՆԱԿ

Քննուող ժամանակաշրջանում թէ՛ Հայոց պետութեան եւ թէ՛ եկեղեցու կեանքում տեղի էին ունենում աննախադէպ իրադարձութիւններ: Նախ՝ Գագիկ Ա-ի (989-1017 թթ.)[1] մահից յետոյ նրա որդի-

1 Գագիկ Ա Բագրատունու մահուան թուականը հայագիտութեան մէջ ընդունուած է 1020-ը: Կ. Իւզբաշեանը որոշ սկզբնաղբիւրների վկայակոչմամբ այն համարում է 1017-ը (**К. Юзбашян**, *Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв.*, Москва, 1988, с. 156-157):

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

ների՝ աւագութեան կարգով գահը ժառանգած, պատմիչ Արիստակէս Լաստիվերցու բնորոշմամբ «մարմնով հաստի եւ յոյժ թանձր», բայց խելացի Յովհաննէս Սմբատի եւ «քաջասիրտ» Աշոտի միջեւ ժառանգութեան հարցում հակառակութիւն է ծագում («սոքա ընդ միմեանս անկեալք հակառակութեամբ վասն բաժնից երկրին՝ կարոտացան իրաւանց եւ դատաստանի»)[2]: Առաջին անգամ, հաւանաբար հէնց 1017 թ., որպէս եղբայրների հաշտեցման միջնորդ հանդէս է գալիս Վրաց Գէորգի Ա (1014-1027 թթ.) թագաւորը: Որոշւում է Յովհաննէս Սմբատին աւագութեան համար տալ Անին եւ նրա շրջակայ գաւառները, իսկ Աշոտին՝ «զներքին կողմն աշխարհին, որ հայի ի վերայ Պարսից եւ Վրաց»[3]: Բանակցութեան աւարտից յետոյ, երբ Յովհաննէս Սմբատը Անի էր ճանապարհուել, Աշոտի իշխաններից մէկը Գէորգիին բողոքում է, որ Յովհաննէս Սմբատը զաւթել է իրեն պատկանող Շատիկ բերդը: Զայրանալով Գէորգին ուղարկում է իր զինուորներին, որոնք իշխանատանը բռնում ու իրենց թագաւորի մօտ են բերում Յովհաննէս Սմբատին, նրան ուղեկցողներին էլ հալածում են, քշում մինչեւ Անի: Գէորգին Յովհաննէս Սմբատին փակի տակ է պահում, ապա նրանից երեք բերդ առնելով՝ բաց թողնում:

Ըստ նոյն պատմիչի՝ Աշոտը, ով իր բաժին տարածքներին ամբողջովին տիրելու խնդիր ունէր, ուղեւորւում է Կոս[տանդնուպոլիս], արժանանում կայսեր բա[րեհաճութեանը], նրանից օգնական զօր[ք] ստանում եւ վերադառնալով՝ տիրում [իր] գաւառներին ու բերդերին, եւ մեծապէ[ս] զօրանում: Հաւանաբար հէնց բիւզանդա[ցիների] գրգմամբ Աշոտը 1021 թ. սկզբն[երին] երկրորդ անգամ է փորձում տիրան[ալ] Անիին:

Սակայն մինչ այդ Անիում նախադէ[պը] չունեցող մի իրադարձութիւն էր տեղ[ի] ունեցել. 1019 թ. Հայոց կաթողիկոս Սա[ր]գիս Ա Սեւանցու (990-1019 թթ.) կենդա[նութեան] օրօք, հէնց նրա ձեռքով, կաթո[ղիկոսական] ձեռնադրութիւն էր ստացե[լ] Պետրոս Ա-ն: Ինչպէս ցոյց են տալիս յ[ե]տագայ դէպքերը, կաթողիկոսների աւա[ն]դական յաջորդականութեան ընդունւա[ծ] կարգը (երբ կաթողիկոս էր ընտրւու[մ] միայն նախորդի մահից յետոյ) խախտու[ել] էր Յովհաննէս Սմբատի ցանկութեամբ[,] ում ձեռնտու չէր ծերացած ու երկրի գոր[]ծերից մի կողմ քաշուած Սարգիս կաթող[ի]կոսի աթոռակալութիւնը, ով չէր կարողա[]ցել (կամ չէր ցանկացել) միջնորդ ու հա[շ]տարար դառնալ թշնամացած եղբայրներ[ի] միջեւ[4]: Թերեւս այդ պատճառով էլ գործ[ին] միջամտել էր Վրաց թագաւորը, ով, ին[չ]պէս տեսանք, նուաստացուցիչ կերպով է[ր] վարուել Յովհաննէս Սմբատի հետ:

Կաթողիկոսական աթոռին կոչել[ը] գործունեայ Պետրոսին, ով ծագում էր «[] գաւառէն Շիրակայ, յազատ տանէ..., ի մե[] ծաց եւ պատուաւորաց ի Կամրջաձորոյ, [] է ի յերկիրն Անւոյ...»[5], Յովհաննէ[ս] Սմբատն ակնկալել է վստահելի միջնոր[դ]

Այս թուագրման օգտին են խօսում նաեւ այլ տուեալներ: Տե՛ս **Կ. Մաթեւոսեան**, *Անի-Շիրակի պատմութեան էջեր*, Երեւան, 2010, էջ 22-26. **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, *Ժամանակագրութիւն*, աշխատասիրութեամբ Կ. Մաթեւոսեանի, Երեւան, 2014, էջ 182, 389-390 (այսուհետեւ՝ Սամուէլ Անեցի եւ շարունակողներ):

2 *Պատմութիւն* **Արիստակիսի Լաստիվերտցւոյ**, աշխատասիրութեամբ Կ. Իւզբաշեանի, Երեւան, 1963, էջ 27 (այսուհետեւ՝ Արիստակէս Լաստիվերցի):

3 Նոյն տեղում:

4 **Կ. Մաթեւոսեան**, *Անի-Շիրակի պատմութեան [է]ջեր*, էջ 25-27: Սարգիս կաթողիկոսը քաշուել [է] Անիի մերձակայ Հոռոմոսի վանք, որտեղ մահ[ա]ցել է 1022 թ.:

5 Նախկինում հայագէտներին ծանօթ չի եղել [այս] տեղեկութիւնը, որը պահպանուել է 1404 թ. [] Ճառընտիրում (Մատենադարան, ձեռ. թիւ. 152[]) թերթ 30բ):

հաշտարար ունենալ Աշոտի նոր ընդվզման ժամանակ: Նրա այդ սպասումն իրականացաւ շատ շուտով, երբ Աշոտն, իր դիրքերն ամրապնդելով, մի մեծ զօրքի գլուխ անցած՝ մօտեցաւ Անիի պարիսպներին: Պատմիչ Մատթէոս Ուռհայեցին գրում է, որ տեղի ունեցած ճակատամարտում անեցիները ծանր պարտութիւն ու կորուստներ կրեցին, եւ այդ ժամանակ հաշտարար առաքելութեամբ հանդէս եկաւ Պետրոս կաթողիկոսը. «Հայրապետն Պետրոս եւ իշխանքն ամենայն ելին առ Աշոտ եւ մեծաւ երդմամբ նստուցին զԱշոտ Դրուց աշխարհին՝ թագաւոր ամենայն Տանն Հայոց, եւ Յովհաննէս նստցի թագաւոր ի քաղաքն Անի. եւ եթէ մեռցի Յովհաննէս, Աշոտ լիցի թագաւոր ամենայն Տանն Հայոց»[6]:

Ինչպէս տեսնում ենք, այս նոր հաշտութեան արդիւնքում Աշոտի ռազմական յաղթանակը նրա համար ապահովել է թագաւորական տիտղոս եւ Յովհաննէս Սմբատի մահից յետոյ Անիում գահակալելու իրաւունք[7]:

Այս շրջանում բիւզանդացիները, ծրագրուած կերպով ինքնուրոյնութիւնից զրկելով եւ զաւթելով հայկական իշխանութիւններն ու թագաւորութիւնները (Տարօն, Տայք, Վասպուրական), հերթական թիրախ են դարձնում Անին: 1021 թ. Վասիլ Բ (976-1025 թթ.) կայսրը արշաւանք է սկսում ըմբոստացած Վրաց Գէորգի Ա թագաւորի դէմ, աւերածութիւններ գործում Տայքում եւ յարակից տարածքներում, ապա ձմեռելու համար գնում Սեւ ծովի ափ՝ Տրապիզոն: Յովհաննէս Սկիլիցէսը գրում է, որ Յովհաննէս Սմբատը զինակցութիւն էր ցուցաբերել Վրաց թագաւորին[8] (հայկական աղբիւրները նման տեղեկութիւն չունեն), որի պատճառով կայսրը նրանից պահանջում է Անին: Պետրոս կաթողիկոսը մէկ տարուայ մէջ արդէն երկրորդ անգամ դառնում էր Յովհաննէս Սմբատի բանագնացը: Տրապիզոնում կայսեր հետ Պետրոսի հանդիպման մասին Արիստակէս Լաստիվերցին գրում է. «Յովհաննէս պատուէր տուեալ էր հայրապետին, եթէ գրէ գիր եւ տուր կտակ թագաւորին զի յետ իմոյ վախճանին՝ զիմ քաղաքս եւ զերկիրս նմա տաց ի ժառանգութիւն»[9]:

Թէեւ Յովհաննէս Սմբատի կտակի պատասխանատուն թագաւորն ինքն էր, բայց, ինչպէս երեւում է, նրա եւ կաթողիկոսի միջեւ այդ շրջանից սկսած հակասութիւններ են ծագում: Թերեւս դրան նպաստում է նաեւ Պետրոսի վարքը, որի մասին Արիստակէս Լաստիվերցին գրում է. «Յոյժ գանձուց սիրող էր Պետրոս, որ և բազումք վասն այնր եպերէին զնա»[10]:

1033 թ., Քրիստոսի խաչելութեան 1000-ամեակին, տեղի է ունենում արեւի խաւարում[11], որը մեծ տպաւորութիւն է թողնում ժամանակակիցների վրայ: Թագաւորն ու կաթողիկոսն Անիից յատուկ պատուիրակութիւն են ուղարկում Սեւանի վանք՝ Յովհաննէս Կոզեռն վարդապետի մօտ՝ կատարուածի մեկնաբանութիւնն իմանալու համար: Վերջինս կանխատեսում է մօտալուտ բազում դժբախտութիւններ,

6 Մատթէոս Ուռհայեցի, էջ 14:

7 Զարմանալի է, որ Յովհաննէս Սմբատի եւ Աշոտի ընդհարման ու հաշտեցման այս երկու միանգամայն տարբեր դէպքերը (որոնք տարբերւում են ընթացքով, հաշտեցման միջնորդներով եւ դրանից յետոյ կողմերից իւրաքանչիւրի ստացածով) «Հայ ժողովրդի պատմութեան» ակադեմիական հրատարակութեան մէջ ներկայացւում են որպէս մէկ դէպք: Տե՛ս *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. III, Երեւան, 1976, էջ 144, *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. II, գիրք երկրորդ, Երեւան, 2014, էջ 158:

8 *Յովհաննէս Սկիլիցէս*, թարգմանութիւն բնագրից, առաջաբան եւ ծանօթագրութիւններ Հ. Բարթիկեանի, Երեւան, 1979, էջ 146-147:

9 **Արիստակէս Լաստիվերցի**, էջ 32:

10 Նոյն տեղում, էջ 82:

11 Արեւի խաւարումը եղել է յունիսի 29-ին: Տե՛ս **Բ. Թումանեան**, *Հայ աստղագիտութեան պատմութիւն*, Երեւան, 1968, էջ 138-139:

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

որպէս հետեւանք բարքերի համընդհանուր անկման ու անբարեպաշտութեան՝ քննադատելով անգամ եկեղեցու առաջնորդին[12]: Նոյն թուականին Պետրոս կաթողիկոսը, ընդհարուելով Յովհաննէս Սմբատի հետ, ծածուկ թողնում է Անիի իր աթոռը եւ տեղափոխւում կայսրութեան տիրապետութեան տակ անցած Վասպուրականի Զորավանք՝ այստեղ մնալով աւելի քան երեք տարի: Այն փաստը, որ Պետրոսը, Յովհաննէս Սմբատից կամ անեցիներից դժգոհելով, չի գնում Աշոտ Դ-ի կամ հայ միւս գահակալների մօտ, այլ ապաւինում է կայսերական կուսակալին, վկայում է հակամարտութեան բաւականին լուրջ պատճառների մասին:

Թագաւորի ու աւագանու պահանջով եւ Վասպուրականի բիւզանդական կուսակալի միջամտութեամբ 1036 թ. Պետրոսը վերադառնում է Անի, բայց քաղաք գալուց յետոյ, կարճ ժամանակ անց, թագաւորի հրամանով ձերբակալւում ու արգելափակւում է Բջնիում: Նոյն տարուայ վերջերին մայրաքաղաքում գումարւում է եկեղեցական ժողով, որը Պետրոսին համարում է աթոռանկ եւ կաթողիկոս է ձեռնադրում Սանահինի վանքի առաջնորդ Դէոսկորոսին: Նման որոշման կայացման համար Պետրոսի դէմ արուած մեղադրանքները պէտք է որ շատ զօրաւոր եղած լինեն (թէեւ ստոյգ յայտնի չէ, թէ որոնք էին դրանք), բայց վճռորոշ էր նաեւ Յովհաննէս Սմբատի դիրքորոշումը:

Դէոսկորոսը, ում մասին պատմիչները հիմնականում դրուատանքով են խօսում, Անիում նոր եպիսկոպոսներ է ձեռնադրում, առաջ քաշում Պետրոսի կողմից մերժուածներին: Սակայն հայ աւանդական հոգեւորականութիւնն ըմբոստանում է Անիում կայացուած որոշման դէմ[13]: Արքունիքը ստիպուած է լինում տեղի տալ մէկ տարի եւ երկու ամիս գահակալելուց յետոյ Դէոսկորոսն աթոռանկ է արւում, վերադարձւում Սանահին, եւ կաթողիկոսական աթոռին 1038 թ. վերջերին վերահաստատւում է Պետրոսը:

Այսպիսով, Պետրոս Ա-ի աթոռակալութիւնը սկսուեց կաթողիկոսների յաջորդականութեան աւանդական կարգի խախտմամբ, քաղաքական լարուած պայմաններում, այնուհետեւ ընթացաւ նրա նկատմամբ եղած հասարակական դժգոհութեան մթնոլորտում, թագաւորի հետ առաջացած տարաձայնութիւնների պայմաններում, որոնք անգամ յանգեցրին ժամանակաւոր աթոռանկութեան:

ՊԱՀԼԱՒՈՒՆԻՆԵՐԻ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պետրոս Ա-ի ժամանակ Պահլաւունեաց տոհմը ծանրակշիռ ներկայութիւն ունէր Անիի արքունիքում: Ժ. դարում ապրած Արտակ Կամսարեանի որդին էր Աբուղամրը, ում անունով Անիում յաճախ Աբուղամրենց են կոչել տոհմի ներկայացուցիչներին. օրինակ՝ նրա որդի Գրիգորի Անիում կառուցած եկեղեցին դեռ միջնադարում յիշատակւում է Աբուղամրենց Սուրբ Գրիգոր անունով[14]: Աբուղամրի որդի Գրիգորի երեք զաւակներից սկսւում է ամբողջ դէն զօրացած տոհմի ճիւղաւորումը՝ Վահրամ, Վասակ, Աբլղարիբ[15]: Նրանք բոլորն էլ բարձր դիրք էին գրաւում Անիի թագաւորութեան մէջ. Վահրամը իշխանաց իշխան էր, յետագայում դարձաւ սպարապետ, Վասակը նոյնպէս յիշատակւում է որպէս իշխանաց իշխան, Աբլղարիբը՝ մարզպան: Այս երեք գործիչներն էլ ապրել են Պետրոս Ա-ի աթոռակալութեան շրջանում: Վասակը 1021 թ. երկիր ներխուժած ասպատակիչների դէմ կռուից յետոյ թիւրիմացաբար սպանւում է հայ գիւղացիների ձեռքով (նրան ասպատակիչներից մէկի տեղն էին դրել), եւ նրա իշխանութիւնն անցնում է որդուն՝ Գրիգոր Բջնեցուն: Վերջինս 1045 թ. բիւզանդացիներից մագիստրոսութեան պատուաստիճան է ստացել եւ առաւելապէս յայտնի է Գրիգոր Մագիստրոս անունով:

Այս երեք գործիչներն էլ, բնականաբար, որոշակի յարաբերութիւնների մէջ են եղել կաթողիկոսի հետ: Այս մասին պատմիչների երկերում վկայութիւններ չեն պահպանուել: Այնուամենայնիւ, հայ պատմագրութեան մէջ ընդունուած տեսակէտ է, որ Բագրատունեաց թագաւորութեան խոր ճգնաժամի շրջանում՝ 1041-1045 թթ., առանձնապէս լարուած են եղել Վահրամ Պահլաւունու եւ Պետրոս կաթողիկոսի յարաբերութիւնները: Նրանցից առաջինն աւանդաբար համարւում է «Հայրենասէր» խմբակցութեան պարագլուխ, երկրորդը՝ Վեստ Սարգսի հետ՝ «բիւզանդասէր» խմբակցութեան[16]: 1020-30-ական թուականների վիմագրերը թոյլ են տալիս որոշ ենթադրութիւններ անել Պահլաւունի յիշեալ գործիչների եւ Պետրոս կաթողիկոսի յարաբերութիւնների վերաբերեալ:

Առաջինը Վահրամ Պահլաւունու՝ Ամբերդի 1026 թ. արձանագրութիւնն է, որը վերաբերում է տեղի Կաթողիկէ եկեղեցու կառուցմանը, բայց նաեւ աւելի հանգամանալից նշում է այստեղ եկեղեցական վարչատարածքային միաւոր ստեղծելու եւ նրա մէջ ներառուած Նիգ եւ Արագածոտն գաւառների ու Քաղաքաղաշտի (Վաղարշապատ) բնակավայրերից այդ աթոռի օգտին գանձուող հարկերի մասին: Հայագէտների աւագ սերունդներին հիմնականում անծանօթ է մնացել այս ուշագրաւ արձանագրութիւնը, որի սկիզբը հետեւեալն է. «Ամին ՆՀԵ (1026) ես՝ իշխանս Վարհամ շինեցի զկաթողիկես, աթոռ հարապետական եւ սահմանեցի պտուղ Նիգի տունն բ (2) կապիճ ց[ո]ր[եան], յԱրագածոտնէ՝ յէգին բ (2) փաս գի[նի] ի Քաղաքոդաշտի բաբակն՝ ժ (10) լիտր...»[17]:

Արձանագրութեան հրատարակիչներն անդրադարձել են այս վիմագրի տեղեկութիւնների՝ տուեալ ժամանակի եկեղեցական ու տնտեսական պատմութեան համար ունեցած կարեւոր արժէքին[18]: Մեզ, սակայն, աւելի շատ հետաքրքրում է այն

12 «...յայսմ հետէ բազում հերձուածք մտանեն յեկեղեցի Աստուծոյ ի ծուլութենէ հայրապետաց, վասն զի թուլամորթին եւ տկարանաւ եւ հաւատոյ քննութիւն ոչ առնեն եւ կան յիմարեալք: Յաղագս արծաթոյն թողուն ի բաց զհաւատն...» (Մատթէոս Ուռհայեցի, էջ 78):

13 Մատթէոս Ուռհայեցին գրում է. «Եպիսկոպոսքն եւ վարդապետքն Հայոց աշխարհին՝ նզովիւք փակեցին զթագաւորն եւ զամենայն նախարարսն Հայոց՝ վասն հակառակութեանն, որ եղեւ ի մէջ եկեղեցւոյ» (Մատթէոս Ուռհայեցի, էջ 86):

14 Բագնայրի 13-րդ դարի արձանագրութիւններից մէկում նուիրատուն նշում է, որ վանքին նուիրած իր գանձագին տունն Անիում գտնւում էր «մաւտ ի յԱպուղամրենց Սուրբ Գրիգոր» (Ն. Սարգիսեան, *Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս*, Վենետիկ, 1864, էջ 181):

15 Բացի նշուածներից, Գրիգորի զաւակներից վաղ հասակում մահացել են Համզէն եւ Սեդան: Աբլղարիբին հայրը չի տեսել, քանի որ ծնուել է հօր մահից յետոյ, դրա համար արձանագրութիւններից մէկում նա գրում է. «Թէպէտ եւ անտես էի ի հարէ իմէ յաղագս կրսերութեան» (*Դիւան հայ վիմագրութեան*, պր. Ս. կազմեց Հ. Օրբէլի, Երեւան, 1966, էջ 33): Գրիգորը երկանուն ուներ՝ Գրիգոր Համզէ: Նա, ըստ Գրիգոր Մագիստրոսի, մահացել է 40 տարեկանում, երբ նրա կինը (Շուշանը) 30 տարեկան էր. տե՛ս **Գ. Մուրադեան**, *Գրիգոր Մագիստրոսի մատենագրութիւնը*,- Մատենագիրք Հայոց, հտ. ԺԶ, Երեւան, 2012, էջ 261 (այսուհետեւ՝ *Մատենագիրք Հայոց*, ԺԶ):

16 Լէո, *Անի*, Երեւան, 1963, էջ 325. **Թ. Յակոբեան**, *Անիի պատմութիւն*, Երեւան, 1980, էջ 351. **Վ. Վարդանեան**, *Պահլաւունիները Հայոց պետականութեան եւ հոգեւոր անաղարտութեան պահապաններ*, Երեւան, 2008, էջ 41 եւ այլն:

17 **Է. Տէր-Մինասեան**, *Ամբերդաձորի արձանագրութիւնները*,- «Էջմիածին», 1961, Ե, էջ 50-51. **Ս. Աւագեան**, *Վիմական արձանագրութիւնների բառաքննութիւն*, Երեւան, 1978, էջ 17. **Ս. Յարութիւնեան**, *Անքերդ*, Երեւան, 1978, էջ 55: Առաւել յստակ վերծանութիւնը (գրչանկարով) բերում է Սուրէն Աւագեանը: Այս եւ յաջորդ մէջբերումներում ընդգծումները մերն են – Կ. Մ.:

18 **Ս. Աւագեան**, նշ. աշխ., էջ 18. **Ս. Յարութիւնեան**, նշ. աշխ., էջ 55:

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

հարցը, որ, փաստօրէն սոյն արձանագրութիւն-հրամանագրով հիմնւում է եկեղեցական վարչատարածքային միաւոր՝ ըստ վիմագրի՝ «աթոռ հայրապետական»[19], որը կարելի է նաեւ պայմանականօրէն եպիսկոպոսութիւն անուանել, նկատի ունենալով նրա պատկառելի տարածքային ընդգրկումը: Իսկ որպէս այն հիմնող՝ հանդէս է գալիս աշխարհական իշխանը, ընդ որում՝ արձանագրութեան մէջ չի նշւում անգամ ժամանակի կաթողիկոսի անունը:

Վահրամ Պահլաւունու եւ Պետրոս կաթողիկոսի յարաբերութիւնների լարուածութեան մասին շատ աւելի խօսուն է Ամբերդի եկեղեցու կառուցումից ընդամէնը երեք տարի անց՝ 1029 թ. Մարմաշէնում գրուած ընդարձակ շինարարական արձանագրութիւնը, որի սկիզբը հետեւեալն է. «Շնորհիւն Ա[ստուծո]յ ես Վահրամ իշխանաց իշխան եւ անթիպատ պատրիկ, որդի Գրիգորի իշխանի Հայոց Մեծաց, ի ցեղէ Պահլաւունի եւ ի զարմից Սրբոյն Գրիգորի, Հայոց լուսաւորչի, որ յաղագս ի Քրիստոս յուսոյն հիմնադրեցի զսուրբ եւ զտիեզերական ուխտս Մարմաշէն, սկսեալ ի ՆԼԵ (988) թուականին Հայոց... մինչեւ ի ժամանակս Յովանիսի, որդւոյ Գագկայ Հայոց շահանշահի՝ առն իմաստնոյ, շինողի եւ խաղաղարարի, եւ ի թուականիս հայոց ՆՀԸ (1029): Եւ կատարեցաք մեծ ջանիւ եւ բազում ծախիւք, ես եւ մայր իմ՝ Շուշիկ, Հայոց տիկնաց տիկին, եւ եղբարք իմ՝ Վասակ իշխանաց իշխան, որ նահատակեցաւ ի թուրքաց պատերազմի, եւ Աբլխարիբ Հայոց մարզպան...: Շինեցաք եւ այլ բազում եկեղեցիս եւ վանորայս, բայց զտեղի հանդստեանս մերոյ առաւել պատուով մեծացուցաք...»[20]:

Այստեղ առաջին իսկ հայեացքից ուշադրութիւն է գրաւում այն հանգամանքը, որ ի տարբերութիւն եկեղեցաշինական նմանատիպ հանդիսաւոր արձանագրութիւնների, այստեղ բացակայում է կաթողիկոսի անունը: Վահրամը դովասանքներ է շռայլում Յովհաննէս Սմբատ թագաւորին՝ նրան կոչելով իմաստուն, շինարար եւ խաղաղարար, փառաբանական ոճով ներկայացնում իր տոհմն ու տոհմակիցների մեծ աւանդը, սեփական եկեղեցաշինական ձեռնարկները, իսկ Պետրոս կաթողիկոսի անունը, փաստօրէն, մոռացութեան է տրւում:

Երկրորդ աչքի զարնող հանգամանքն այն է, որ Վահրամն իրեն անուանում է «ի ցեղէ Պահլաւունի եւ ի զարմից Սրբոյն Գրիգորի՝ Հայոց լուսաւորչի...»: Այսպիսի պնդումը տուեալ ժամանակի համար կարելի է պարզապէս արտառոց համարել, քանի որ տոհմական եւ ժառանգական իրաւունքների առաջնահերթութեան այդ դարաշրջանում այն պէտք է ընկալուէր որպէս բացայայտ յաւակնութիւն կաթողիկոսական աթոռի նկատմամբ: Հարկ է ընդգծել, որ Ժ. դարում հանդէս եկած այս տոհմը Պահլաւունի անունով այստեղ նշւում է առաջին անգամ[21]:

---

19 Բնագրում՝ «հարապետական»: Ըստ Ս. Աւագեանի՝ «հաւանաբար այստեղ նշուած հայրապետական աթոռը պէտք է հասկանալ իբրեւ եպիսկոպոսական աթոռ, իսկ սահմանուած հարկերն ու հոգեւոր արարողութիւնների դիմաց հաւաքուող տուրքերը իբրեւ այդ աթոռի օգտին գանձուող հասոյթներ...» (Ս. Աւագեան, նշ. աշխ., էջ 18):

20 Արձանագրութիւնն ունեցել է բազմաթիւ հրատարակութիւններ. տե՛ս Ա. Մխիթարեանց, *Տաղարան մատեան*, Վենետիկ, 1773, էջ 9-11. Ղ. Ալիշան, *Ծիրակ*, Վենետիկ, 1881, էջ 148, «Յուշարձան տարեգիրք», Բ, Երեւան, 1993, էջ 160-161. Ս. Սիրադեան, *Մարմաշէնի վանքը*, Ս. Էջմիածին, 1998, էջ 12 եւ այլն:

21 Նախկինում համարւում էր, որ 1004 թ. իր Պատմութիւնն աւարտած Ստեփանոս Տարօնեցի Ասողիկն է առաջին անգամ օգտագործել Պահլաւունի տոհմանունը Վահրամ իշխանի վերաբերմամբ, սակայն պարզուեց, որ տոհմանունը պարունակող փոքր հատուածը յետագայի (Ժ.Գ.) յաւելում է Ասողիկի Պատմութեան մէջ (տե՛ս Մաթեւոսեան, *Յոհան գրչի ընդօրինակիչ*

Ամբերդի եւ Մարմաշէնի արձանագրութիւնները ենթադրել են տալիս, որ Վահրամ Պահլաւունու եւ Պետրոս կաթողիկոսի միջեւ լուրջ հակասութիւն է եղել: Թէեւ պատմիչներն այդ մասին լռում են, սակայն դարձեալ վիմագրական նիւթի շնորհիւ կարող ենք տեսնել այս հակադրութեան մասնակի մեղմացումը: Պէտք է ենթադրել, որ Պետրոսը բաւականին անյարմար, որոշ իմաստով՝ մեկուսացած կացութեան մէջ է յայտնուել, ուստի պիտի փորձէր շտկել իրավիճակը: Ինչպէս երեւում է, նա գտել է Ամբերդի աթոռի հարցի լուծման փոխզիջումային տարբերակ: Այս մասին կարելի է դատել Բջնիի 1031 թ. արձանագրութիւնից, որը վերաբերում է տեղի Ս. Աստուածածին եկեղեցու կառուցմանն ու նաեւ կաթողիկոսական ու թագաւորական յատուկ հրամանագրով՝ Բջնիի եպիսկոպոսութեան հիմնադրմանը: Ինչպէս յայտնի է, Բջնին Վահրամ Պահլաւունու եղբօր՝ 1021-ին սպանուած Վասակի նստոցն էր, որն անցել էր նրա որդուն՝ Գրիգորին (Մագիստրոս): Հօր մահուան 10-ամեայ տարելիցին Գրիգորն աւարտում է Բջնիի Ս. Աստուածածին եկեղեցու կառուցումը, որի օծման ժամանակ տեղի է ունենում նաեւ նորահաստատ եպիսկոպոսական աթոռի հռչակումը:

Արձանագրութեան սկզբում ասւում է. «Թ[ուականիս] ՆՁ: (1031) շնորհիւն Ա[ստուծո]յ այս հրամանք է իմ՝ տ[է]ր Պետրոսի Հայոց կաթողիկոսի, եւ Սմբատայ շահանշահի, որ հաս[տատեցաք զեպիսկ]ոպոսարան ի Բջնի քաղաք, զս[ուր]բ Ա[ստուա]ծածինս հիմնարկեալ կատարեաց Գրիգոր իշխանաց իշխան, որդի Վասակայ, եւ տուան վիճակ ի Ս[ուր]բ Ա[ստուա]ծածինս ի Փոչէհանից մինչեւ ի Նիգ...»[22]: Այնուհետեւ նշւում են եկեղեցու տրուած ընծաներն ու նորաստեղծ թեմի ընդարձակ սահմանները, որի հատուածը, ցաւօք, թերի է պահպանուել, սակայն ընդհանուր պատկերը երեւում է՝ «հաստատեցաք արձանագրով եւ շրջաբերականաւ զսահմանահատ վիճակիս սորայ, որ է արեւելից ի Ծար գետոն մինչեւ ի գետ Ախուրեան յԱնւո, ի հիւսիսանս՝ պետս խո...»[23]:

Այսպիսով, Բջնիի 1031 թ. արձանագրութեան մէջ թագաւորի ու կաթողիկոսի անունից պաշտօնապէս ստեղծւում է եպիսկոպոսական աթոռ, որին յատկացւում է Բջնիից ու Նիգ գաւառից մինչեւ Ախուրեան գետն ընկած մի մեծ տարածք: Ուշագրաւ է, որ այս նոր եպիսկոպոսութեան տարածքը ներառում էր Վահրամ Պահլաւունու՝ 1026 թ. Ամբերդի համար որպէս թեմ սահմանուած շրջանը: Կարծում ենք, որ այս քայլով կաթողիկոսը հնարամիտ լուծում է գտել, մի կողմից՝ չէզոքացնելով Վահրամ Պահլաւունու ստեղծած Ամբերդի եկեղեցավարչական միաւորը, միւս կողմից՝ վերջինիս տարածքը ներառելով դարձեալ Պահլաւունիներին (Գրիգոր Բջնեցուն) պատկանող աւելի մեծ միաւորի՝ Բջնիի եպիսկոպոսութեան կազմում:

Այժմ ներկայացնենք վիմագրական տուեալներ, որոնք վերաբերում են կաթո-

---

պատմական ժողովածուն եւ կատարած յաւելումները,- «Էջմիածին», 2008, Զ-Է, էջ 102-112):

22 Հ. Ղ. Ալիշան, *Այրարատ*, Վենետիկ, 1890, էջ 273: Արձանագրութեան ճշտուած տեքստը մեզ է տրամադրել Գագիկ Սարգսեանը, ինչի համար շնորհակալութիւն ենք յայտնում:

23 Դեռեւս Հ. Ղ. Ալիշանը նշում է, որ վիմագրի եղծուած մասերը «անստոյգ» են թողնում թեմի սահմանները, սակայն «որչափ երևի ի բանիդ՝ ձգիւր սահմանն ընդ երկայնն իբրև յարևելից ծովուն Գեղամայ ցԱխուրեան գետ և ի հիւսիսոյ՝ ի սահմանաց Գուգարաց մինչև ի հարաւկողմն բնիկ վիճակիս կամ գաւառիս Բջնոյ» (Հ. Ղ. Ալիշան, *Այրարատ*, էջ 272): Նկատենք միայն, որ հիւսիսարեւելեան կողմի համար նշուած Ծար գետի անունն աւելի որոշակի է դարձնում սահմանը, քանի որ այն սկիզբ է առնում Ծաղկունեաց լեռնաշղթայի լանջերից (Գոռոգոչ գիւղից 0,5 կմ հիւսիս եւ միախառնւում Մարմարիկ գետին, երկարութիւնը կազմում է 10 կմ), այսինքն՝ այն չի հասնում Գեղամայ ծովին:

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

ղիկոսի եւ Վահրամ Պահլաւունու կրտսեր եղբայր Աբլղարիբի առնչութիւններին: Վերջինս Յովհաննէս Սմբատի արքունիքում մարզպանի պաշտօնն ունէր եւ թագաւորի հրամանով որպէս բանագնաց 1035 թ. մեկնել էր Կոստանդնուպոլիս, որտեղ «մեծածախ գանձիւ» ձեռք էր բերել Փրկչական խաչի մասունք եւ, Անի գալով, կառուցել Ս. Փրկիչ եկեղեցին: Այս մասին նա պատմում է եկեղեցու 1035 թ. արձանագրութեան մէջ, իսկ յաջորդ թուականին գրել է տալիս մէկ այլ՝ աւելի պաշտօնական ոճով արձանագրութիւն՝ այն սկսելով կաթողիկոսի անուամբ. «Յամի ա[սուած]ապատիւ եւ հոգեւոր տ[եառ]ն Պետրոսի եւ ի թագաւորութեան Սմբատա...[24]*: Ուշադրութեան է արժանի նոյն 1036 թ. եկեղեցու պատին Պետրոս կաթողիկոսի թողած արձանագրութիւնը: Այն սկսւում է Յովհաննէս Սմբատին նուիրուած փառաբանական խօսքերով, այնուհետեւ կաթողիկոսի անունից ասւում է. «կամ եղեւ ինձ՝ տ[եառ]ն Պետրոսի Հայոց կաթողիկոսի, տալ զայգին Աշնակի, որ ի մեր կորդ արկած էր, ք[րիստո]սասէր մարզպանին Ապլղարիպա, որդո Գրիգորո Պալհաւունո*[25]*, վասն առաւել սիրոյն եւ երախտեացն, զոր ծա-ռայեալ էր զՍուրբ Լուսաւորչի ա-թո-ռիս»*[26]*:*

Այստեղ առաջին հայեացքից տարօրինակ է թւում, որ կաթողիկոսն Աշնակում իր տնկած այգին է նուիրում իշխանին, բայց յետոյ ասւում է, որ իշխանն էլ իր հերթին այն նուիրում է նորակառոյց եկեղեցուն: Սակայն առաւել հետաքրքրական է, որ կաթողիկոսը, նշելով Աբլղարիբի հօրը, նրան կոչում է Գրիգոր Պահլաւունի: Ինչպէս վերեւում նշեցինք, Վահրամի 1029 թ. Մարմաշէնի արձանագրութիւնից առաջ այս տոհմանունն աղբիւրներում չի հանդիպում: Անիի 1036 թ. կաթողիկոսական վիմագրում Պահլաւունի տոհմանուան արձանագրումը, այն էլ՝ ոչ Պահլաւունու կողմից, որոշ իմաստով կարելի է դիտարկել որպէս այդ անուան պաշտօնականացում, որը կաթողիկոսը թերեւս կատարել է Աբլղարիբի՝ կաթողիկոսական աթոռին մատուցած ծառայութիւնների դիմաց:

Ամփոփելով վիմագրական նիւթի քննութիւնը մեզ հետաքրքրող հարցի տեսանկիւնից՝ կարող ենք եզրակացնել, որ եթէ Վահրամ Պահլաւունին Պետրոս կաթողիկոսի հետ լարուած յարաբերութիւններ է ունեցել, ապա նրա եղբայր Աբլղարիբը մարզպանն աւելի դիւանագիտօրէն է հարցերին մօտեցել եւ կարողացել է իր շահերն ապահովել: Այս նոյն մօտեցումն է ունեցել նաեւ Գրիգոր Բջնեցին, սակայն աւելի հեռագնայ նպատակներով: Վերջինս, մեր քննած հարցի տեսանկիւնից առանցքային դերակատարութիւն ունեցող գործիչն է, ուստի նրան կ՚անդրադառնանք աւելի հանգամանօրէն:

24 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. Ա, էջ 44:

25 Հրատարակութեան մէջ (Դիւան հայ վիմագրութեան, պր. Ա, էջ 48) տոհմանունը նշուած է ՊԱՀԼԱՒՈՒՆՈ, մինչդեռ գծանկարից երեւում է, որ վիմագրում գրուած է ՊԱԼՀԱՒՈՒՆՈ: «Պալհաւունի» գրելաձեւը հանդիպում է նաեւ այլ աղբիւրներում (տե՛ս **Կ. Մաթեւոսեան**, *Սամուէլ Անեցու Ժամանակագրութեան ձեռագրերը եւ նորայայտ լրացումները*, Երեւան, 2009, էջ 62, 180, **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, էջ 113, 134. *Մատենագիրք Հայոց*, հտ. ԺԶ, էջ 139, 140, 487):

26 Արձանագրութեան շարունակութեան մէջ նախ ուռճացուած բնորոշումներով խօսւում է այգու մասին, իսկ յաջորդ նախադասութեամբ անցում է կատարւում միանգամայն այլ թեմայի: Կաթողիկոսի խօսքերից պարզւում է, որ Աբլղարիբը Ս. Փրկիչ եկեղեցու մօտ մի ապարանք է կառուցել («զապարանդ, զոր շինեալ է Ապլղարիպա առ Սուրբ Փրկչիս»), եւ անա Պետրոսը խստօրէն պատուիրում է, որ այնտեղ բնակուողները, այսինքն՝ եկեղեցու սպասաւորները, պահպանեն այն եւ Աբլղարիբի՝ եկեղեցուն կատարած նուիրատուութիւնները, հոգ տանելով եկեղեցու մասին (*Դիւան հայ վիմագրութեան*, պր. Ա, էջ 48):

ԳՐԻԳՈՐ ԲՋՆԵՑԻՆ ՄԻՆՉԵՒ ՄԱԳԻՍՏՐՈՍՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԱՆԱԼԸ

Գրիգոր Բջնեցի (Մագիստրոս) Պահլաւունին հայ միջնադարի ամենափայլուն դէմքերից է, ոչ միայն որպէս իշխան՝ քաղաքական-ռազմական գործիչ, այլեւ աստուածաբան-փիլիսոփայ, ուսուցիչ, գրող, բազմակողմանի զարգացած անհատ, ուստի պատահական չէ, որ արժանացել է մեծ թուով ուսումնասիրողների ուշադրութեանը: Հայոց միջնադարեան աշխարհական գործիչների շարքում, որոնց կենսագրութեան մասին հիմնական աղբիւրը պատմագիրների երկերը, վիմագրական արձանագրութիւններն ու ձեռագրերի յիշատակարաններն են, Գրիգորը միակն է, ով ունի նաեւ մեր օրերը հասած հարուստ նամականի (թղթեր), որի միջոցով բացայայտւում են ոչ միայն նրա կենսագրութեան առանձին մանրամասները, այլեւ՝ անձնական յատկանիշները, այլոց հետ ունեցած յարաբերութիւնները, տարբեր հարցերի նկատմամբ որդեգրած մօտեցումները եւ այլն[27]*:*

Հէնց սկզբում նշենք, որ հայագիտութեան մէջ Գրիգոր Բջնեցու յատկապէս վաղ շրջանի գործունէութեան մասին հրապարակումներում առկայ է մի թիւրիմացութիւն. նրան երբեմն շփոթում են Հասանի որդի Գրիգոր Մագիստրոսի հետ՝ մի իշխան, ում անունն առաջին անգամ յիշատակւում է Արզականի Ս. Ստեփանոս եկեղեցու 1001 թ. արձանագրութեան մէջ, Գագիկ Ա Թագաւորի անունից յետոյ. «...ի Թագաւորութեան Գագկա աշխարհակալի, Գրիգորի՝ Հայոց մագիստոռսի...»[28]*: Այս նոյն իշխանն է կառուցել Կեչառիսի վանքի Ս. Գրիգոր եկեղեցին, որի 1003 թ. արձանագրութեան մէջ նշւում է նաեւ նրա հօր անունը. «...ես Գրիգոր Մագիստռոս, որդի Հասանայ, շինէցի զեկեղեցիս...»*[29]*: Այս Գրիգորը Քեղի ամրոցի Գեւորգ իշխանի եղբայրն էր, ով Հաւուց թառի վանքի հովանաւորն էր, եւ այդ վանքում ժամանակին եղած (այժմ կորած) 1013 թ. մի արձանագրութեան մէջ նշուած Գրիգոր Մագիստրոսը նոյնպէս յիշեալ գործիչն է*[30]*: Հասանի որդի Գրիգոր Մագիստրոսը երկանուն է ունեցել՝ Գրիգոր Ապիրատ, եւ հայ պատմիչները նրան հիմնականում Ապիրատ անունով են յիշատակում*[31]*: Ձնայած այս իշխանը մահացել (սպանուել) է 1021 թ., սակայն Գրիգոր Մագիստրոս անունով յիշւում է նաեւ իր դստեր՝ Տիկնացտիկնոջ՝ Տեկորում թողած 1042 թ. արձանագրութեան մէջ*[32]*: Տիկնացտիկնոջ ամուսինը յայտնի իշխան Վեստ Սարգիսն էր: Ուսումնասիրողները, մեծ մասամբ չի-*

27 *Գրիգոր Մագիստրոսի թղթերը*, բնագիրն յառաջաբանով եւ ծանօթագրութիւններով առաջին անգամ ի լոյս ընծայեաց Կ. Կոստանեանց, Աղէքսանդրապոլ, 1910, էջ 3-244,- Մատենագիրք Հայոց, հտ. ԺԶ, էջ 139-385: Գրիգոր Մագիստրոսի մասին տե՛ս նաեւ **Հ. Ղ. Ալիշան**, *Շնորհալի եւ պարագայ իւր*, Վենետիկ, 1873, էջ 8-14. **Ն. Ակինեան**, *Ներսէս Լամբրոնացի*, Վիեննա, 1956, էջ 329-372. **Լ. Խաչերեան**, *Գրիգոր Պահլաւունի Մագիստրոս*, Լոս Անճելըս, 1987, էջ 19-146. **Ս. Մխիթարեան**, *Գրիգոր Մագիստրոսի կեանքը եւ գեղարուեստական ժառանգութիւնը*, Երեւան, 2001, էջ 5-44. **Վ. Վարդանեան**, *Պահլաւունիները Հայոց պետականութեան եւ հոգեւոր անաղարտութեան պահապաններ*, Երեւան, 2008, էջ 55-90 եւ այլն:

28 **Գ. Սարգսեան**, *Գրիգոր-Ապիրատ Հասանեան. Հիմնադիր Կեչառիսի վանքի (վիմագրական նոր վկայութիւն)*,- «Հին Հայաստանի մշակոյթը» ժողովածու, 12, Երեւան, 2002, էջ 111:

29 **Գ. Յովսէփեան**, *Խաղբակեանք կամ Պոռշեանք Հայոց պատմութեան մէջ*, Անթիլիաս, 1969, էջ 159. **Կ. Մաթեւոսեան**, *Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը եւ նրա տոհմը 11-րդ դարում*,- «Բանբեր Մատենադարանի», թիւ 18, Երեւան, 2008, էջ 67-93:

30 Այս մասին հանգամանօրէն տե՛ս **Կ. Մաթեւոսեան**, *Հաւուց թառի վանքը*, Երեւան, 2012, էջ 16-30:

31 **Կ. Մաթեւոսեան**, *Գրիգոր Ապիրատ Մագիստրոս. 11-րդ դարի մոռացուած մեծ իշխանը*,- «Վէմ», 2015, թիւ 3:

32 «Ես Տիկ(ն)ացտիկին, դուստր Քրգորոյ Մագիստրոսին եւ ամուսին Սարգսի, արեւելից վէստիս» (**Ն. Սարգիսեան**, նշ. աշխ., էջ 207):

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

մանալով Հասանի որդի Գրիգոր Մագիստրոսի գոյութեան մասին, կարծել են, թէ իշխանուհու հայրը Գրիգոր Բջնեցին է եւ այստեղից հեռուն գնացող եզրակացութիւններ են արել նրա ու Վեստ Սարգսի յարաբերութիւնների մասին[33]: Մինչդեռ, ինչպէս յայտնի է, Գրիգոր Բջնեցին մագիստրոս է դարձել 1045-ին:

Հաւանաբար 990-ականներին ծնուած, Անիում եւ Բիւզանդիայում կրթութիւն ստացած Գրիգոր Բջնեցու անունն առաջին անգամ յիշատակւում է 1021 թ., նրա հօր մահուան դէպքի նկարագրութեան մէջ, որը հանգամանօրէն ներկայացնում է Մատթէոս Ուռհայեցին[34]: Հօր՝ Վասակ Հոլոմի մահից յետոյ Գրիգորը բաւականին երիտասարդ հասակում Անիի թագաւորութեան ամենաբարձր կարգի ազատների շարքում գրաւում է նրա տեղը, իր աւագ եւ կրտսեր հօրեղբայրների՝ Վահրամի եւ Աբլղարիբի կողքին: Մատթէոս Ուռհայեցին Վասակին կոչում է «ասպարապետ», թէեւ ընդունուած է համարել, որ նրա աւագ եղբայր Վահրամն էր Անիի թագաւորութեան սպարապետը: Գուցէ նա այդ պաշտօնը ստացել է Վասակի մահից յետոյ: Ուշագրաւ է, որ Մարմաշէնի մօտ 2004 թ. յայտնաբերուած մի անթուական արձանագրութեան մէջ Վասակը կոչւում է «Հայոց ասպետ»[35]: Հնարաւոր է, որ սա «ասպարապետի» համառօտումն է, բայց չի բացառւում, որ Անիի թագաւորութեան վերջին շրջանում այստեղ վերականգնուել է թագադիր ասպետի տիտղոսը եւ յանձնուել Պահլաւունիներին (Արշակունիների ժամանակ թագադիր ասպետները Բագրատունիներն էին): Այս ենթադրութիւնը կարծես հիմնաւորում է ստանում այն իրողութեամբ, որ որոշ ժամանակ անց Վասակի որդի Գրիգոր Բջնեցին է լինում Գագիկ Բ-ի գլխին թագ դնողը (այդ մասին՝ քիչ յետոյ):

Հարկ է նշել, որ Պահլաւունիները եւ առաջին հերթին՝ Վասակի զաւակները, նրա մահը շատ ծանր են տանում ու նրան համարում են քրիստոնէական հաւատի համար նահատակուած մարտիրոս: Առաջինն այդ մասին նշում է Վասակի դուստրը՝ Սեղան, ով իր ամուսնու տոհմին պատկանող՝ 1010 թ. Սմբատ Մագիստրոսի[36] հիմնած Բագնայրի վանքին նուիրատուութիւն է կատարում ի յիշատակ իր հօր՝

33 Լէոն անգամ Գրիգոր Բջնեցու եւ Վեստ Սարգսի գործակցութեամբ դաւադրական մի ամբողջ ծրագիր է յօրինել: Տե՛ս **Լէո**ն, *Անի*, էջ 322-328. *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. 3, Երեւան, 1976, էջ 148. **К. Юзбашян**, նշ. աշխ., էջ 161. **Ս. Մխիթարեան**, նշ. աշխ., էջ 15 եւ այլն:

34 Պատմիչը գրում է, որ Բջնիում «Վասակ ասպարապետն Հայոց սիրեցեալ որդւովն իւրով Գրիգորիւ եւ այլ փառաւոր ազատօքն նստեալ կայր մեծաւ ուրախութեամբ»: Սեղանակիցները յանկարծ տեսնում են մի գուժկանի, ով գալիս ու յայտնում է ասպատակիչների ներխուժման մասին: Վասակը, Բջնին թողնելով որդուն («յանձն արարեալ զտուն իւր եւ զամուրն Բջնի որդւոյ իւրում Գրիգորի»), տեղում եղած զօրքի հետ դուրս է գալիս թշնամուն ընդառաջ: Կռուի ժամանակ Վասակը մեծամարտում սրախողխող է անում մի ազդաճայ խափշիկի: Երկկողմանի բազում զոհեր են լինում եւ կռուի վերջում Վասակը զօրականներով հեռանում է ու մի քարաժայռի վրայ ստուերում հանգստանում՝ ննջում: Այստեղ են լինում նաեւ փախստական շինականներ, որոնցից մէկը, Վասակին սխալմամբ թշնամու տեղ դնելով, հարուածում, ժայռից ցած է գցում, եւ նա մահանում է (**Մատթէոս Ուռհայեցի**, էջ 16-19): Մխիթար Այրիւանեցին էլ Վասակի մահուան մասին շատ համառօտ գրում է. «Գրիգոր Մագիստրոս... սա է որդին Հոլոմին Վասակայ՝ շինողի Բջնոյ, Կայենոյ եւ Կայծոնոյ, զոր յանգէտս սպանին ի Սերկեւլէ» (**Մխիթարայ Այրիւանեցւոյ** *Պատմութիւն Հայոց*, Մոսկուա, 1860, էջ 58-59):

35 **Ա. Մանուչարեան**, *Նորայայտ յիշատակութիւն՝ «Հայոց ասպետ» վիմագրութեամբ*, ԵՊՀ ատուածաբանութեան ֆակուլտետ, Տարեգիրք Բ, Երեւան, 2007, էջ 157-158:

36 Նախկինում Սմբատ Մագիստրոսին առանց փաստական հիմնաւորման, թիւրիմացաբար համարել են Վահրամ Պահլաւունու աւագ որդին, մինչդեռ նա այլ տոհմի ներկայացուցիչ էր (**Կ. Մաթեւոսեան**, *Սմբատ Մագիստրոս*,- «Հանդէս ամսօրեայ», 2008, էջ 173-186):

«քրիստոսի զօրական» Վասակի[37]: Իսկ Մարմաշէնի վանքի 1029 թ. արձանագրութեան մէջ, ինչպէս վերը տեսանք, Վահրամն իր եղբօրը կոչում է՝ «Վասակ իշխանաց իշխան, որ նահատակեցաւ ի Թուրքաց պատերազմի»: Աւելի ուշ՝ մագիստրոս դառնալուց յետոյ, Գրիգորն իրեն յիշատակում է որպէս Վասակ «մարտիրոսի» որդի՝ «Գրիգորի՝ մագիստրոսի եւ կիտաւնատի, որդւոյ Վասակայ մարտիրոսի...»[38]: Այսինքն, չնայած Վասակի մահուան դէպքն աւելի շուտ դժբախտ պատահար կարելի է համարել, սակայն հաշուի առնելով, որ դա տեղի է ունեցել անհաւատների դէմ ճակատամարտից յետոյ, տոհմակիցները նրան կոչում են Քրիստոսի նահատակ եւ մարտիրոս:

Ինչպէս երեւում է, հօր տիրոյթներն ու պաշտօնը ժառանգելուց յետոյ Գրիգորը բուռն գործունէութիւն է ծաւալել, առաջին հերթին հայրենի Բջնիում հիմնելով Ս. Աստուածածին գեղաշէն եկեղեցին, որն, ինչպէս վերը նշուեց, օծման ժամանակ դարձել է նաեւ բաւական մեծ տարածք ընդգրկող եպիսկոպոսութեան կենտրոն: Գրիգոր Բջնեցու ինքնայիշատակման միակ վիմագիր օրինակը, մինչեւ մագիստրոսութեան արժանանալը, պահպանուել է նոյն եկեղեցում, որն ուշ յայտնաբերման պատճառով անծանօթ է մնացել իշխանի կենսագիրներին. «Յ[իսու]ս Ք[րիստո]ս ողորմեա Գրիգորոս իշխանաց իշխանի, որդւոյ Վասակա»[39]:

Ինչպէս տեսնում ենք Աստծոյ ողորմածութիւնը հայցող Գրիգորն այստեղ նշում է Անիի թագաւորութեան մէջ իր կրած տիտղոսը՝ իշխանաց իշխան, եւ ընդունուած կարգի համաձայն՝ հօր անունը: Արձանագրութիւնը հաւանօրէն գրուել է եկեղեցու շինարարութեան աւարտի ժամանակ՝ 1031 թ.:

Վերը նշեցինք, որ 1033 թ. տեղի ունեցած արեւի խաւարման առիթով թագաւորն ու կաթողիկոսն Անիից պատուիրակութիւն են ուղարկում Յովհաննէս Կոգեռն վարդապետի մօտ: Մատթէոս Ուռհայեցին Սեւան գնացածների մասին ասում է. «Իսկ որք առաքեցան առ վարդապետն Հայոց՝ Գրիգոր Մագիստրոսն որդին Վասակայ եւ հայկազնին՝ Մեծն Սարգիս, եւ այլք ոմանք յազատաց տանն Հայոց»[40]: Այդ ժամանակ Գրիգորն արդէն Անիի թագաւորութեան մէջ կարեւոր դեր ունեցող անձնաւորութիւն էր: Դրա մասին է վկայում նաեւ իշխանի յիշեալ շրջանի նամակագրութիւնը մի շարք բարձրաստիճան անձանց ու յատկապէս՝ Պետրոս Ա կաթողիկոսի հետ, որին գրուած 9 նամակ է յայտնի:

Ինչպէս իշխանի թղթերի առաջին հրատարակիչ Կ. Կոստանեանցն է գրում, Գրիգորի «թղթակիցների մէջ առաջին տեղը գրաւում է Տ. Պետրոս Ա..., Պահլաւունի իշխանը նորա հետ կապուած էր առանձին իմն սիրով եւ յարգանքով»[41]: Իսկապէս, նամակների ընթերցումը հէնց այդ տպաւորութիւնն է թողնում, քանի որ դրանք հիմնականում նուիրուած են աստուածաբանական, գիտական, կրթական

37 **Հ. Ղ. Ալիշան**, *Շիրակ*, Վենետիկ, 1881, էջ 113:

38 *Մատենագիրք Հայոց*, հտ. ԺԶ, էջ 10:

39 Արձանագրութիւնը գտնւում է Բջնիի եկեղեցու ներսում, հիւսիսային որմնամոյթի խոյակի արեւելեան կողմում: Հրատարակել է հնագէտ-վիմագրագէտ Գագիկ Սարգսեանը (**Գ. Սարգսեան**, *Թեղենեաց վանքի պեղումները եւ Բջնիի մի արձանագրութեան առթիւ*, Հայկական ՍՍՀ-ում 1983-1984 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդիւնքներին նուիրուած գիտական նստաշրջան. զեկուցումների թեզիսներ, Երեւան, 1985, էջ 54):

40 **Մատթէոս Ուռհայեցի**, էջ 76: Մատթէոս Ուռհայեցին, ով այս դէպքերի մասին գրել է շուրջ մէկդարեայ հեռաւորութիւնից, երբ Գրիգոր Բջնեցին առաւելապէս յայտնի էր Գրիգոր Մագիստրոս անունով, այստեղ ու յետագայում եւս նրան այդպէս է կոչում, քանի որ նրան այդ անունով էր ճանաչում:

41 *Գրիգոր Մագիստրոսի թղթերը*, էջ 285-286:

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

հարցերին, աղանդաւորների պարսաւանքին եւ այլն:

Նամակներից առաջինը (թուղթ Ա) գրուել է հաւանօրէն 1038-ին, երբ Պետրոսը կրկին վերադարձել էր կաթողիկոսական աթոռին եւ իշխանից խնդրել Եփրեմ Ասորու գիրքը, որը նա ընթերցել էր Բջնիում արգելափակուած ժամանակ. վերնագիրն է «Առ հոգեւոր տէրն Պետրոս Հայոց կաթողիկոս, ի ժամանակին յորում ի կապանաց իւրոց վերստին յաջորդեաց յաթոռ իւր, խնդրեալ ի Գրիգորէ զգիր սրբոյն Եփրեմի հաւատոցն, զոր ընթեռնոյր մինչ ի բանտին էր»[42]: Քաղաքական իրավիճակի բացայայտման տեսանկիւնից հետաքրքրական է եւս երկու թուղթ՝ գրուած Պետրոս կաթողիկոսի դէմ Անիում ծաւալուած ժողովրդական յուզումների ժամանակ: Մէկի վերնագրում (թուղթ Բ) կարդում ենք. «Առ տէր Պետրոս, ի ժամանակի խուժան յառնելոյ ի քաղաքին, ի վերայ նորա՝ բան մխիթարական...», որտեղ Գրիգորը Պետրոսին պատահածի մասին մանրամասներ չի գրում, միայն մխիթարում է նրան՝ այպանելով «Արամեան անմտութիւնը»[43]: Միւս նամակը (թուղթ Ժ) հասցէագրուած է Պետրոս կաթողիկոսի սարկաւագին (անունը չի նշւում)՝ «Առ ոմն սարկաւագ տեառն Պետրոսի ի ժամանակի խազմի խուժանին, ի վերայ յարուցեալ», որտեղ խօսւում է նոյն դէպքերի մասին: Մեր կարծիքով՝ այս նամակներում կաթողիկոսի դէմ բարձրացած յուզումների վերաբերեալ ակնարկները վերաբերում են 1030-40-ական թուականներին քաղաքական հողի վրայ կատարուած իրադարձութիւններին[44]:

1041 թ. մահանում են անհաշտ եղբայրները՝ նախ Աշոտը, ապա Յովհաննէս Սմբատ թագաւորը, եւ երկիրը յայտնւում է ծանր վիճակում: Գրիգոր Բջնեցուն վիճակւում է Անիի թագաւորութեան մայրամուտի այս դրամատիկ շրջանում պատմական գլխաւոր դերակատարներից մէկը դառնալ:

ԳՐԻԳՈՐ ԲՋՆԵՑԻՆ ԳԱԳԻԿ Բ-Ի ԹԱԳԱԴԻՐ ԵՒ ՄԱԳԻՍՏՐՈՍ

Անիի Բագրատունեաց թագաւորութեան վերջին շրջանի պատմութիւնն ուսումնասիրուել է բաւականին մանրակրկիտ կերպով, ուստի կատարուած դէպքերի մասին կը նշենք շատ հակիրճ՝ շեշտը դնելով Գրիգոր Բջնեցու գործունէութեան վրայ:

Յովհաննէս Սմբատի մահից յետոյ Անիում սկսւում է անիշխանութեան մի շրջան, որից օգտուելով՝ թագաւորի հոգաբարձուն՝ Վեստ Սարգիսը, փորձում է գրաւել գահը[45]: Բիւզանդական կայսրութիւնն էլ իր հերթին, Յովհաննէս Սմբատի կտակը մէջտեղ բերելով, պահանջում է իրեն յանձնել Անին: Մերժում ստանալով՝ բիւզանդացիները դիմում են ռազմական գործողութիւնների, բայց անյաջողութեան մատնուելով՝ Անիի թագաւորութեան դէմ են հանում Տաշիր Զորագէտի Բագրատունի թագաւոր Դաւիթ Անհողինին, ով աւերածութիւններ է գործում Շիրակում: Այդ ժամանակ քաղաքում իրական իշխանութիւնը (թագաւորական գանձարանը եւ այլն) գտնւում էր Վեստ Սարգսի ձեռքում:

Նման անորոշ իրավիճակում կարուել նախաձեռնութիւն է հանդէս բերում Վահրամ Պահլաւունին իր տոհմակիցներով, ովքեր 1042 թ. հնարամտօրէն (հաւանաբար

42 *Մատենագիրք Հայոց*, հտ. ԺԶ, էջ 210-211:

43 Նոյն տեղում, էջ 267-271:

44 Կ. Մաթեւոսեան, *Անի. եկեղեցական կեանքը եւ ձեռագրական ժառանգութիւնը*, Ս. Էջմիածին, 1997, էջ 212-216:

45 Այս արարքի եւ յետագայ գործողութիւնների համար հայ պատմիչները պարսաւանքով են խօսում Վեստ Սարգսի մասին: Նրա շինարարական գործունէութիւնը դրուատանքով է յիշում Սամուէլ Անեցին (տե՛ս **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, էջ 183, 391):

ծպտուած կերպով) Անի են բերում Յովհաննէս Սմբատի եղբայր Աշոտի որդուն՝ տասնութամեայ Գագիկին եւ, նրան թագադրելով, հռչակում Հայոց թագաւոր: Այդ մասին պատմում է Արիստակէս Լաստիւերցին. «Իսկ Վահրամ, այր հզօր եւ անուանի, եւ բարեպաշտութեամբ յոյժ վեհ, որպէս թէ ոչ ոք հաւասար նմա՝ Պահլաւ, հանդերձ իւրովք ազգակցօք, որդւովք եւ եղբօրորդւովք իբրեւ երեսուն ազատօք, ոչ միաբանեցան ընդ նմա (Վեստ Սարգսին – Կ. Մ.), այլ կոչեալ առ ինքեանս զԳագիկ որդի Աշոտոյ, թագաւորեցուցին ի վերայ իւրեանց, եւ իմաստութեամբ եւ հնարիւք մուծին ի քաղաքն»[46]: Սամուէլ Անեցին էլ յաւելում է, որ Գագիկ Բ-ի (1042-1045 թթ.) օծումը կատարել է Պետրոս կաթողիկոսը Անիի Մայր տաճարում[47]:

Այս դէպքի վերաբերեալ մէկ այլ կարեւոր մանրամասն է աւելացնում Մատթէոս Ուռհայեցին՝ նշելով, որ Գագիկին թագադրողը եղել է Գրիգոր Բջնեցին. «Ժողովեցան ամենայն նախարարքն Հայոց առ հայրապետն Տէր Պետրոս եւ օծին զԳագիկ թագաւոր ի վերայ ամենայն Տանն Հայոց, շնորհօք Հոգւոյն Սրբոյ եւ հրամանաւ մեծի իշխանին, որ էր ազգաւ Հայկազնեան եւ հայրենեօք Պահլաւունի, որոյ անուն՝ ըստ նախնոյն իւրոյ, Գրիգոր ճանաչի, եւ էր յազգէն սրբոյն Գրիգորի»[48]: Սմբատ Սպարապետը Գրիգորին այս ձեռնարկը նախաձեռնողի դեր է վերագրում. «Ժողովեցան իշխանքն Հայոց հրամանաւ մեծին Գրիգորի, որդւոյ Վասակայ Պահլաւունոյ, եւ զնացեալ առ սուրբ հայրապետն տէր Պետրոս՝ օծին զԳագիկ թագաւոր ի վերայ Տանն Հայոց»[49]:

Այսպիսով, Վահրամ Պահլաւունին որպէս զօրաւոր եւ տոհմապետ, իսկ ուսեալ Գրիգորը՝ գաղափարակիր եւ արարողական մասնակից, Գագիկին թագադրելով՝ փորձում են կանխել Անիի Բագրատունեաց թագաւորութեան անկումը: Գրիգոր Բջնեցին այդ օրերին նաեւ զօրաբանակի գլուխ անցած Հրազդան գետի մօտ պարտութեան է մատնում արեւելքից երկիր ներխուժած ասպատակիչներին[50]: Հաւանաբար այդ նոյն ժամանակ նրա որդին էլ մասնակցում էր երկրի արեւմտեան կողմից թագաւորութեան սահմանները մտած բիւզանդացիների դէմ մղուած կռիւներին: Նրան էլ ուղղուած է Գրիգորի ամենաուշագրաւ թղթերից մէկը (թուղթ ՁԳ), որը զաւթիչներին հակահարուած տալու բանաստեղծական մի ազդու կոչ է[51]:

Սակայն յետագայ դէպքերը երիտասարդ թագաւորի ու նրա աջակիցների համար անբարենպաստ հունով են ընթանում: Անիի փոքր թագաւորութեան դէմ դուրս է գալիս բիւզանդական դիւանագիտութեան

46 **Արիստակէս Լաստիւերցի**, էջ 57-58:

47 «Արդ, յետ մահուանն Սմբատայ, որ եւ Յովանէսն, միաբանեալ ազատագունդ զաւրացն եւ իշխանացն, յաւէտ եւս պատրիարգին տեառն Պետրոսի, ժողովեցան առ դրունս մեծափառ Կաթուղիկէին՝ ի մայրաքաղաքս յԱնի, եւ հաստատեն զԳագիկ զեղբաւորորդին Յովաննիսի, թագաւոր ի վերայ ինքեանց ի տեղի հաւրեղբաւր իւրոյ» (տե՛ս **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, էջ 186):

48 **Մատթէոս Ուռհայեցի**, էջ 96-97: Ուռհայեցու Ժամանակագրութեան այս հատուածում «հրամանաւ մեծի իշխանին» բառերից յետոյ յետագայում հաւանաբար ընդմիջարկութիւն է արուել՝ «Որով եւ օծեաց զնա սրբակեացն մեծն Մարցէն»: Այս հարցին հանգամանօրէն անդրադարձել է Հ. Բարթիկեանը (տե՛ս **Հ. Բարթիկեան**, *Ուռհայեցու երկում հանդիպող «Մարցէ» անուան մասին*,- ՊԲՀ, 1973, թիւ 2, էջ 163-167): Ըստ Գ. Աբգարեանի՝ «մեծն Մարցէն»-ի փոխարէն հաւանօրէն եղել է «մեծիմաստն» բառը (այս մասին տե՛ս **Ռ. Մաթեւոսեան**, *Բագրատունեաց Հայաստանի պետական կառուցուածքն ու վարչական կարգը*, Երեւան, 1990, էջ 190):

49 **Սմբատայ Սպարապետի** *Տարեգիրք*, Վենետիկ, 1956, էջ 36-37:

50 **Մատթէոս Ուռհայեցի**, էջ 96-99:

51 *Մատենագիրք Հայոց*, հտ. ԺԶ, էջ 369: Նամակի գրութեան ժամանակի մասին տե՛ս **Գ. Աբգարեան**, *Ո՞վ է Գրիգոր Մագիստրոսի յիշատակած Նիկողաս զօրավարը*,- Լրաբեր հաս. գիտ., 1971, թիւ 9, էջ 44-49:

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

հզօր մեքենան: Արտաքին ճնշումներին գումարւում են նաեւ հակասութիւնները երկրի ներսում: Թագադրումից անմիջապէս յետոյ Գագիկին յաջողւում է ճնշել Վեստ Սարգսի ընդվզումը, որից յետոյ, սակայն, վերջինիս դարձեալ տեղ է տալիս արքունիքում: Բայց դրանից որոշ ժամանակ յետոյ Գագիկն ընդհարւում է Գրիգոր Բջնեցու հետ: Այս մասին թէեւ պատմիչների մօտ տեղեկութիւններ չկան, սակայն այդ փաստն ակներեւ է դառնում Գրիգորի՝ հաւանօրէն 1042-1043 թթ. գրուած մի քանի նամակներից: Այդ իմաստով յատկանշական են յատկապէս իշխանի՝ իր բարեկամ Սարգիս Անեցի վարդապետին գրուած նամակները: Վերջինս կաթողիկոսարանի մատենադարանապետն էր եւ անգամ Գագիկ Բ-ի ու Գրիգորի հաշտեցման միջնորդ է դարձել[52]: Նամակներից առաջինի (Թուղթ ԺԸ) վերնագիրն է «Առ վարդապետն Սարգիս ի ժամանակի հալածանաց, գրեաց ի մայրաքաղաքն Անի»[53]: Ուշագրաւ է, որ Սարգիս Անեցուն գրած մէկ այլ նամակում (Թուղթ ԺԹ) իշխանը դժգոհում է, որ Գագիկը, չարութեան ուղին բռնելով, հետ է կանգնում Աստծու առաջ տուած ուխտից (հաւանաբար նկատի ունի թագադրութեան ժամանակ նրա տուած երդումը[54]): Քանի որ Սարգիսն իր մտերիմն էր, իշխանը նրա հետ շատ անկեղծ է ու թագաւորի տարիքը նկատի ունենալով նրան յաճախ մանուկ է կոչում, մեղադրում բանսարկուներին լսելու եւ այլ մեղքերի մէջ:

Գրիգոր Բջնեցու նկատմամբ հալածանքների այս շրջանում է գրուել նաեւ ժամանակագրօրէն թերեւս նրա վերջին նամակը՝ ուղղուած Պետրոս կաթողիկոսին (Թուղթ Գ): Վերնագիրն արդէն շատ խօսուն է՝ «Պատասխանի կաթողիկոսին՝ յաղագս Գագկայ, որ ասէր թէ՝ խորհին կորուսանել զքեզ»[55]: Յայտնի է նաեւ այդ շրջանում Գրիգորի՝ ընկճուած ոճով գրուած նամակը՝ ուղղուած հէնց Գագիկ Բ-ին (Թուղթ ՀԲ): Աւելի ուշ, երբ Գագիկն արդէն գահազուրկ էր, իսկ Գրիգորը՝ մագիստրոս, նա Գագիկին գրել է մէկ այլ նամակ՝ միանգամայն այլ շեշտադրմամբ (Թուղթ ՀԳ, այդ նամակին կ'անդրադառնանք քիչ յետոյ): Հալածանքների շրջանում տարբեր հասցէատէրերին ուղղուած թղթերում Գրիգոր Բջնեցու հիմնական ասելիքն այն է, որ ինքն անհիմն եւ կեղծ զրպարտութիւնների զոհ է[56]:

Ստոյգ յայտնի չէ, թէ երբ եւ ինչպէս է հանգուցալուծուել այս գժտութիւնը, սակայն 1044 թ. վերջերին, երբ արտաքին ճնշումներից եւ Բիւզանդիայի դրդմամբ Դուինի ամիրայի յարձակումներից ընկճուած ու անելանելի վիճակի մէջ յայտ-

52 Սարգիս Անեցուն ուղղուած Գրիգորի առաջին երեք թղթերը՝ ԺԸ, ԺԹ, Ի, բովանդակութեան համաձայն՝ գրուել են Գագիկ Բ-ի ու իշխանի գժտութեան շրջանում, իսկ ԻԱ եւ ԻԲ թղթերը՝ այն ժամանակ, երբ Գագիկն արդէն զրկուել էր գահից, Գրիգորը Տարօնում էր, իսկ Սարգիս Անեցին Անիի կաթողիկոսարանի լուծարումից յետոյ քաշուել էր Սեւանի վանք: Սեւան ուղարկուած լինելու պատճառով այս նամակների հասցէատէր է համարուել մի կարծեցեալ Սարգիս Սեւանցի, մինչդեռ նամակների բովանդակութիւնից ու դրանցում արծարծուած հարցերի համանման շրջանակից ակնյայտ է, որ Գրիգորի թղթակիցը նոյն մարդն է՝ իր վաղեմի բարեկամ եւ ուսումնակից Սարգիս Անեցին (այս մասին հանգամանօրէն տե՛ս Կ. Մաթեւոսեան, Սարգիս վարդապետ Անեցի,- «Անի», 1992, թիւ 1, էջ 40-47. նոյնի Անի, էջ 330-335):

53 Մատենագիրք Հայոց, հտ. ԺԶ, էջ 294:

54 «Արդ այսմ չարեաց դարձեալ հաւանեալ դա, ո[ր] երբեմն ուխտեաց Տեառն Աստուծոյ այնմ, [...] նստին ի քրովբէս, զատելիսն նորա ատեալ [...] զսիրելիսն սիրել: Եւ այժմ եթէ ոչ դարձցի դա [...] չարեաց, զոր վերստին ստացաւ, դարձեալ [...] րեսցուք արդեաւք: Բայց գիտեմ, եթէ ոչ» (տե՛ս Մատենագիրք Հայոց, հտ. ԺԶ, էջ 283):

55 Նոյն տեղում, էջ 262-264:

56 Կարելի է ենթադրել, որ Պահլաւունիների մ[...] ջամտութեամբ իր նպատակների ձախողմա[ն] պատճառով Վեստ Սարգիսը յետագայում Գա[գ]իկին տրամադրել է նրանց ու յատկապէս՝ Գրի[գ]որ Բջնեցու դէմ:

նուած Գագիկին առաջարկւում է մեկնել կայսեր մօտ՝ Կոստանդնուպոլիս, դատելով անուղղակի վկայութիւններից՝ Գրիգոր Բջնեցին Անիում էր:

Համառօտակի անդրադառնանք թագաւորութեան այս խոր ճգնաժամի շրջանում Պետրոս կաթողիկոսի կատարած մի աննախադէպ քայլին: Ընդունուած է այն կարծիքը, որ Պետրոսն իր քրոջ որդուն՝ Խաչիկին (Խաչիկ Բ Անեցի) տեղապահ է նշանակել այն ժամանակ, երբ բիւզանդացիներն իրեն դուրս են բերել Անիից, եւ ինքն էլ մտածելով, թէ գուցէ բիւզանդացիներն այլեւս իրեն չեն թողնի Անի վերադառնալ՝ տեղապահ է հաստատել[57]: Սակայն Մրենի արձանագրութիւններից մէկը վկայում է միանգամայն այլ ժամկէտի մասին: Այն վերաբերում է Գագիկ Բ-ի՝ Մրենում որոշ հարկեր թողնելուն եւ սկսւում է հետեւեալ կերպ. «ՆՂ (1041) թուականութեանս Հայոց ի հայրապետութեան Տէր Պետրոսի եւ Խաչկայ Հայոց կաթողիկոսաց, այս իմ հրամանք են Գագկա Շահանշահի որդոյ Աշոտո, ազատեալ եմ զՄրենոյ զհարկն...»[58]: Ինչպէս տեսնում ենք, արդէն Գագիկ Բ-ի գահակալութեան սկզբում Խաչիկը յիշատակւում է որպէս Պետրոսի աթոռակից կաթողիկոս: Արձանագրութեան մէջ նշուած Հայոց ՆՂ թուականն ընդգրկում է 1041 թ. մարտի 11-ից 1042 թ. մարտի 10-ն ընկած ժամանակաշրջանը: Փաստօրէն, Պետրոս Ա-ն, օգտուելով հէնց իր աթոռակալութեամբ առաջացած նախադէպից (երբ կաթողիկոս Սարգիս Սեւանցին նրան կաթողիկոս օծեց), նաեւ երկրում ստեղծուած քաղաքական խառը իրավիճակից, կարելի է ասել՝ միանձնեայ որոշմամբ, իր քրոջ որդուն օծել է կաթողիկոս: Սա նշանակում է, որ նա այդ ժամանակ աթոռը կրկին կորցնելու վտանգ էր զգում, կարծում ենք, ոչ այնքան բիւզանդացիներից զգուշանալով (որոնց հետ այդ ժամանակ լաւ յարաբերութիւններ ունէր), որքան երկրի ներսում իր դէմ եղած դժգոհութիւնը հաշուի առնելով: Հնարաւոր է նաեւ, որ օր օրի զօրացող Պահլաւունիներին՝ իրենց տոհմի ծագումը Գրիգոր Լուսաւորչի հետ կապելու բարձրաձայնումը նոյնպէս մի ահազանգ է եղել Պետրոսի համար:

Գագիկ Բ-ի իշխանութիւնը չճանաչող Բիւզանդիան աստիճանաբար մեծացնում է ճնշումը Բագրատունեաց թագաւորութեան վրայ: Բիւզանդական զօրքերը յայտնւում են Անիի պարիսպների տակ, որտեղ արդէն երրորդ անգամ պարտութիւն են կրում Վահրամ Պահլաւունու գլխաւորած հայկական զօրքերի կողմից: Ի վերջոյ Կոստանդին Թ Մոնոմախ (1042-1054 թթ.) կայսրը փոխում է մարտավարութիւնը. հաշտութիւն կնքելու եւ բարեկամութիւն հաստատելու պատրուակով Գագիկին հրաւիրում է Կոստանդնուպոլիս (1044): Անիի արքունիքում տարակուսում են՝ ընդունել հրաւէրը, թէ ոչ: Այս մասին հանգամանօրէն գրում է Արիստակէս Լաստիվերցին՝ նշելով, որ Գագիկը որոշեց մեկնել՝ «Նենգաւորին Սարգսի սադրելոյն լուեալ» եւ չլսեց իրեն թագաւորեցնողներին. «ոչ եկաց ի պատուէր Վահրամայ եւ այլ ազատացն, որ թագաւորեցուցին զնա»[59]: Գագիկը քաղաքի բանալիները

57 Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 1443. Գ. Մազուտեան, Ընտրեալդ յԱստուծոյ. Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութիւնը, Երեւան, 1995, էջ 70:

58 Ն. Սարգիսեան, նշ. աշխ., էջ 197:

59 Արիստակէս Լաստիվերցի, էջ 62: Պարզ է, որ Գրիգոր Բջնեցին Գագիկին թագաւորեցնողներից էր, սակայն վերջինիս՝ Կոստանդնուպոլիս մեկնելու հարցի առնչութեամբ նրա դիրքորոշումն անյայտ է: Այս առումով պէտք է նկատի ունենալ Սամուէլ Անեցու ժամանակագրութեան մէջ կատարուած մի յաւելում (երկար ժամանակ այն սխալմամբ համարուել է Սամուէլ Անեցունը), որտեղ ասւում է. «Տէր Պետրոս եւ ազատ Սարգիս եւ Գրիգոր Բջնեցին նենգեցին զԳագիկ եւ զԱնի ետուն ի կայսրն Յունաց, վասն որոյ ելին ի բընիկ աշխարհէն իւրեանց՝ տէր Պետրոս եւ Գրիգոր՝ Վասակայ որդին, Գագիկ եւ այլք իշ-

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

յանձնում է կաթողիկոսին եւ մեկնում Կոստանդնուպոլիս, բայց տեղ հասնելուն պէս նրան արգելափակում են եւ այլեւս թոյլ չեն տալիս հայրենիք վերադառնալ՝ պահանջելով Անին փոխանակել կայսրութեան այլ քաղաքի հետ[60]:

Գագիկի վերադարձի արգելքի մասին իմանալով՝ Անիում որոշում են նրա հետեւից ուղարկել Գրիգոր Բջնեցուն: Մեկնելով՝ նա համոզւում է, որ Գագիկին այլեւս հետ չեն թողնելու եւ, պատմիչի խօսքերով, քանի որ իմաստուն մարդ էր, նախաձեռնութիւն հանդէս բերելով՝ ինքնակամ կայսերն է տալիս Բջնիի բանալին ու իր հայրենի ժառանգութիւնը, որի համար մեծարանքի է արժանանում նրա կողմից: Գրիգորը ստանում է նաեւ մագիստրոսութեան պատիւ, զինուորական պաշտօն եւ նոր տիրոյթներ Հայաստանի՝ կայսրութեանը պատկանող շրջաններում: Արիստակէս Լաստիւերցին այս առնչութեամբ գրում է. «Եւ ի յերկարիլ խնդրոյս այսորիկ, Գրիգոր որդի քաջին Վասակայ, ելեալ եւ նա գնաց առաջի թագաւորին: Եւ քանզի այր իմաստուն էր եւ խելամուտ յոյժ աստուածային գրոց, որպէս թէ ո՛չ այլ ոք, իբրեւ ետես, եթէ ոչ են թողլոց զ Գագիկ ի տեղի իւր, յառաջ կացգալ տայ զբանալին Բջնոյ ցթագաւորն, եւ զամենայն գիւր զհայրենի ժառանգութիւնն. եւ մեծարեալ ի նմանէ՝ առնու զպատիւ մագիստրոսութեան, եւ զտեղիս բնակութեան ի սահմանս Միջագետաց գիւղս եւ քաղաքս, գրով եւ ոսկի մատանեաւ յազգէ յազգ մինչեւ յաւիտեան»[61]:

Գրիգոր Մագիստրոսի (այսուհետեւ նրան այդպէս պիտի կոչենք) այս քայլը կարելի է բացատրել մի քանի պատճառով: առաջինը քաղաքական պահի իրատեսական գնահատումն էր, քանի որ պայքարի շարունակումն ակնյայտօրէն դատապարտուած էր ձախողման: Գրիգորն այս քայլով գոհացրեց կայսերը՝ Գագիկի յամառութեան այլընտրանքը ներկայացնելով, որի շնորհիւ թերեւս սպասուածից աւելին ստացաւ: Երկրորդ պատճառը հաւանաբար Գագիկի հետ ունեցած գժտութիւնն էր եւ նախընթաց տարիների իր հալածական ու ընկճուած վիճակը, որն ինքնասէր իշխանը չէր կարող հեշտութեամբ մոռանալ: Սա, եթէ կարելի է այդպէս ասել, քաղաքական ռեւանշի հասնելու փայլուն առիթ էր, որը Գրիգորի նման շրջահայեաց գործիչը չէր կարող բաց թողնել իր ձեռքից (ինչպէս կը տեսնենք, Գագիկի հետ նրա թշնամութիւնը շարունակուել է նաեւ դրանից յետոյ): Երրորդ պատճառ-հիմնաւորումն էլ այն կարող էր լինել, որ Անիի բիւզանդական նուաճման անխուսափելիութիւնը. նկատի ունենալով, Գրիգոր Մագիստրոսը պիտի մտածէր նաեւ իր տոհմակիցների ու յատկապէս՝ Վահրամ Պահլաւունու մասին, ով նախորդ տարիներին մի քանի անգամ ռազմի դաշտում յաղթել էր բիւզանդացիներին եւ Գագիկին գահ բարձրացնող գլխաւոր գործիչն էր, ուստի նոր պայմաններում կարող էր յոյների վրէժխնդրութեան արժանանալ: Գրիգորն իր քայլով կանխեց այդ ենթադրուող հաշուեյարդարը, եւ, ինչպէս քիչ յետոյ կը տեսնենք, բիւզանդացիների՝ Անի գալուց յետոյ ծերունի Վահրամը շարունակեց համարուել քաղաքում մնացած հայկական զինուժի հրամանատարը:

Յաջորդ դէպքերն այսպիսին են. առանց գահակալի մնացած Անին որոշ դիմադրութիւնից յետոյ՝ 1045-ին, բիւզանդամէտ գործիչների մասնակցութեամբ անցնում է կայսրութեան տիրապետութեան տակ[62]: Գագիկին, զուտ կայսեր բարի կամքի դրսեւորմամբ, որոշ տիրոյթներ են տրւում[63], իսկ Գրիգոր Մագիստրոսը, Հայաստան՝ Տարօն վերադառնալով, փաստօրէն դառնում է երկրում իրական իշխանութիւն ունեցող եւ բիւզանդացիների վստահութիւնը վայելող ամենազօրեղ հայ իշխանը: Այս իրողութեան իւրայատուկ արտայայտութիւնը տեղ է գտել Մխիթար Այրիվանեցու ժամանակագրութեան մի

խանք Հայոց եւ եկին ի Հոռոմս» (Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, էջ 178): Թէպէտ յաւելման ստոյգ ժամանակը յայտնի չէ, սակայն տեղեկութեան ծագումը շատ հին պէտք է համարել, նկատի ունենալով, որ Գրիգորն այստեղ կոչւում է Բջնեցի եւ Վասակայ որդի, այլ ոչ թէ Մագիստրոս:

60 Արիստակէս Լաստիւերցու հաղորդմամբ Գագիկը «հաւատաց վասն երդմանցն եւ խաչին, եթէ վասն խակութեան մտացն եթէ վասն երկիւղածութեան բարուցն՝ ոչ գիտեմ. տուեալ զբանալի քաղաքին ի Պետրոս, որ յայնժամ ունէր զաթոռ հայրապետութեան Լուսաւորչին մերոյ, եւ յանձնեաց ի նա զամենայն հոգս աշխարհին մեծաւ դաշամբ եւ ուխտիւ... եւ ի քաղաքէն, եւ չոգաւ ի Յոյնս զանդարձ ուղեւորութիւն. իբրեւ զձուկն ի կարթէ ըմբռնեալ կամ իբրեւ զհաւ ի ծուղակաց: Զոր տեսեալ թագաւորին՝ ո՛չ յիշեաց զերդումունն, եւ ոչ զխաչին զմիջնորդութիւնն. այլ առ իւր արգել, եւ խնդրէր թէ Տո՛ւր զԱնի, եւ ես տաց քեզ փոխանակաւ զՄելիտինէ զգաւառսն որ շուրջ զնովաւ: Այլ նա ո՛չ առնու յանձն» (տե՛ս Արիստակէս Լաստիւերցի, էջ 62):

61 Նոյն տեղում:

վկայութեան մէջ. «Իսկ Մոնոմախն, որ կալաւ զԳագիկ թագաւորն՝ ետ զիշխանութիւն երկրիս Գրիգորոյ Մագիստրոսի...»[64]: Լ. Խաչերեանը Գրիգոր Մագիստրոսին նուիրուած մենագրութեան մէջ տարակուսանք է յայտնում այս տեղեկութեան առնչութեամբ՝ նշելով, որ այն «ոչ մի այլ աղբիւրով չի վաւերացւում»[65]: Եւ դա բնական է, քանի որ իրականում այդպիսի բան չի եղել: Մխիթար Այրիվանեցու հաղորդածն իրավիճակի ընդհանրացուած ներկայացումն է, եւ վկայում է այն մասին, որ Կոստանդին Մոնոմախի ձեռքով Գագիկի գահազրկումից ու Գրիգորի կտրուկ վերելքից յետոյ Հայաստանում կարող էր ստեղծուել այնպիսի տպաւորութիւն, թէ Գագիկին արգելափակելով՝ կայսրը երկրի իշխանութիւնը յանձնել է Գրիգոր Մագիստրոսին:

Հետաքրքրական է, որ արդէն 1045-ին Գրիգոր Մագիստրոսը Կոստանդնուպոլսում եղած ժամանակ գրած իր «Տաղասացութիւն» պոէմի առաջաբանում, որ յայտնի է նաեւ որպէս «Հազարտողեան», ներկայանում է որպէս Պահլաւունի. «Ի չորեք հարիւր եւ իննսուն եւ չորս թուականութեանս Հայոց (1045), լինելոյ իմ Գրիգորի Մագիստրոսի, որդի Վասակայ, աստուածապահ կիտաւնի եւ դուկի եւ Պալհաւունոյ, եղեալ իմ յաստուածապահ քաղաքին ի Կոստանդնուպաւլիս, ի ժամանակս բարեպաշտ եւ քրիստոսապսակեալ արքային Կոստանտեայ Մոնաւմախին...», եւ գրութեան վերջում նոյնպէս նշում է իր տիտղոսներն ու Պահլաւունի լինելը[66]:

Ուշագրաւ է նաեւ, թէ Գրիգոր Մագիստրոսն ինչպէս է ներկայացնում իր տիրոյթները Տարօն գալուց յետոյ Գագիկ Բ-ին գրուած վերջին նամակում (թուղթ ՀԳ): Քաղաքավարական ձեւը պահպանելով,

---

62 Գագիկի վերադարձի յոյսը կորցրած եւ բիւզանդացիների արարքից վիրաւորուած անեցիները փորձում են դիմադրութիւն ցոյց տալ: Նրանց շրջանում առաջ են գալիս տարբեր խմբակցութիւններ, որոնք մտածում են քաղաքը յանձնել Դաւիթ Անհողինին կամ Վրաց Բագրատ թագաւորին, անգամ՝ Դուինի Աբուլասվար ամիրային, ում կինը Գագիկ Բ-ի քոյրն էր: Այդ ժամանակ, տեսնելով անեցիների տրամադրութիւնները, վճռական քայլերի է դիմում Պետրոս կաթողիկոսը. «Իբրեւ ետես հայրապետն Պետրոս զայսպիսի խորհուրդ, թէ ո՛ւմ եւ իցէ՝ ի գնալ է քաղաքս, առաքէ առ այն, որ ունէր զիշխանութիւն արեւելից կողմանն, որ նստէր ի քաղաքն Սամուսատ... եւ գրէ, թէ՝ Ծանո՛ թագաւորին, թէ մեզ զինչ հատուցանէ փոխարէնս, եւ ես տաց զքաղաքս եւ զայլ ամուրս որ յաշխարհիս են: Իսկ նա, իբրեւ լուաւ, փութապէս ծանոյց թագաւորին. եւ լուեալ թագաւորին, գանձիւք եւ իշխանութեամբ հաճեալ զկամս նորա, եւ այսու տիրեցին Անւոյ եւ ամենայն աշխարհին» (Արիստակէս Լաստիւերցի, էջ 63):

63 «Գագիկ աներախտի մնաց առ թագաւորն. որում առ մարդասիրութեան տուեալ նմա տեղիս, զոր ինքն կամեցաւ, որ յոյժ պակաս էր ըստ արժէիցն Անւոյ» (Արիստակէս Լաստիւերցի, էջ 63):

64 Մխիթար Այրիվանեցի, *Պատմութիւն Հայոց*, Մոսկուա, 1860, էջ 58-59:

65 Գ. Խաչերեան, նշ. աշխ., էջ 143:

66 *Մատենագիրք Հայոց*, հտ. ԺԶ, էջ 139-140:

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

բայց նաեւ Գագիկին արդէն ուղղակիօրէն յանդիմանելով՝ նա նամակի վերջում, կարելի է ասել, չարախնդում է գահազուրկ թագաւորի վրայ՝ ներկայացնելով, թէ ինչպիսի ընդարձակ իշխանութեան է տիրապետում. «Վասպուրականի եւ Տարաւնոյ եւ Մանազկերտի, Արճիշոյ, Բերկրոյ, Միջագետաց տէր եւ Մաւնումախին մագիստրոս, վեստ եւ տուկ»[67]:

1051 թ. Կեչառիսի վանքի արձանագրութեան մէջ Գրիգոր Մագիստրոսն իրեն արդէն սկսում է կոչել Արշակունի. «...Գրիգորո Մագիստոսին, կիտաւնտին եւ դուկին Վասպուրականի եւ Տարաւնո, Արշակունոյն եւ Հայկազն[ոյն]...»[68]: Նոյն բանը տեսնում ենք նրա կնիքի վրայ, որի յուներէն մակագրութեան թարգմանութիւնը հետեւեալն է. «Տէր, օգնիր Քո ծառային՝ Արշակունի Գրիգորին՝ մագիստրոսին, սենեկապետին, Վասպուրականի եւ Տարօնի դուքսին»[69]:

Հետաքրքրական է, որ ոչ միայն Գրիգորն է իրեն Արշակունի կոչել, այլ նրան այդպէս են սկսել ճանաչել ու կոչել նաեւ ուրիշները: Մասնաւորապէս, ասորիների կաթողիկոսին գրուած նամակի (թուղթ կէ) երկար վերնագրից («յորժամ էր դուքս ի Վասպուրական եւ ի Տարաւն...»), երեւում է, որ դրանից առաջ այդ կաթողիկոսը նամակ է ուղարկել Գրիգոր Մագիստրոս Արշակունուն՝ «զոր նորա գրեալ թուղթ ի Գրիգոր Մագիստրոսն Արշակունին»[70]: Նշենք նաեւ, որ մագիստրոս դառնալուց յետոյ Գրիգորն այլեւս ոչ մի նամակ չի գրել Պետրոս կաթողիկոսին (յամենայն դէպս, այդպիսիք յայտնի չեն):

Այսպիսով, մագիստրոսութեան պատուին արժանանալուց յետոյ ոչ միայն մեծանում է Գրիգորի տիտղոսաշարը (Բջնիի տէր եղած ժամանակի «իշխանաց իշխան, որդի Վասակայ» ձեւակերպման փոխարէն), այլեւ ընդգծւում է տոհմանունը Պահլաւունի կամ Արշակունի:

ՎԱՀՐԱՄ ՊԱՀԼԱՒՈՒՆՈՒ ՄԱՀԸ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԵՌԱՑՈՒՄՆ ԱՆԻՒՑ

Մինչ Գրիգոր Մագիստրոսը կոստանդնուպոլսում էր, իսկ ապա տեղափոխուեց Տարօն՝ անցնելով բիւզանդական կուսակալի իր պարտականութիւններին, 1045-1046 թթ. Անիում ծաւալուեցին նոր ողբերգական իրադարձութիւններ:

Անի եկած բիւզանդական առաջին կուսակալ Իասիտէսը (Լաստիւերցին նրան կոչում է Ասիտ) պատիւներ է մատուցում Պետրոս կաթողիկոսին. «Եկեալ անչափ պատուով մեծարէ զհայրապետն Պետրոս»[71]: Սակայն քաղաքում մթնոլորտը շատ լարուած էր: Այս մասին յայտնում է Սամուէլ Անեցին[72]: Նման պայմաններում 1046 թ. աշնանն Իասիտէսը կայսերական հրամանով արշաւանք է սկսում Դուինի Աբուլասվար ամիրայի դէմ, քանի որ վերջինս հրաժարւում է վերադարձնել Անիի թագաւորութիւնից հէնց բիւզանդացիների դրդմամբ խլած բերդերը: Յոյսը զօրքի մեծաքանակութեան վրայ դրած բիւզանդացի կուսակալն անկազմակերպ զօրաշարով շարժւում է Դուինի վրայ եւ ընկնում Աբուլասվարի պատրաստած ծուղակը: Բիւզանդացիները ծանր պարտութիւն են կրում: Զոհւում են նաեւ հայկական ուժերն առաջնորդող ծերունի Վահրամ Պահլաւունին եւ նրա որդի Գրիգորը: Նրանց յուղարկաւորում են Մարմաշէնի վանքում:

Այս կորուստը շատ ծանր է տանում Շիրակից հեռու գտնուող Գրիգոր Մագիստրոսը, ով այդ առիթով իր բարեկամ Սիւնեաց Յովհաննէս մետրոպոլիտի ցաւակցական նամակին ի պատասխան մի ծաւալուն եւ յուզիչ նամակ է գրում (թուղթ ԺԱ): Գրիգոր Մագիստրոսը, ողբալով հօրեղբօր մահը, իրեն համարում է «ի հայրական խնամոցն զրկեալ», ապա փառաբանական խօսքեր ասելով հանգուցեալի մասին՝ անցնում է ուղիղ խօսքով նրան դիմելուն: «Աւա՜ղ կենդանութեանս, որ երանեամ վախճանելոյդ» ասելով՝ Մագիստրոսն իր ոճի ողջ ճոխութեամբ ներկայացնում է հանգուցեալի արժանիքները («մաքուր վարուք եւ ողջախոհութեամբ յանգել ըստ քում նախնւոյն մերոյ Գրիգորի Լուսաւորչի»), ողբում իրենց անտիրանալը՝ ասելով, թէ ով պիտի այսուհետեւ իրենց խրատի, սաստի ու մխիթարի եւ այլն: Նամակի առանցքային հատուածներից մէկում Գրիգոր Մագիստրոսն, անդրադառնալով Վահրամի ծագմանը, գրում է, թէ նրան վայել էր թագաւոր լինել ու պալատներում ճեմել. «Քանզի ազգ սեփական եւ որդիք Աբրահամու յազգէն քեռուրական, ի գաւառէն Պարթեւաց, ի քաղաքէ Պահլաւ, ի ցեղէ Արշակունի, շառաւիղ մերոյն Լուսաւորչին, քեզ այդպէս վայելէր թագաւոր եւ յայսպիսի պաղատան ճեմել-...»[73]: Գրիգոր Մագիստրոսը նշում է իր հօրը՝ Վասակին, պապին՝ Գրիգորին, գովաբանելով նրա ու կնոջ եկեղեցանուէր գործունէութիւնը՝ աւելացնելով. «Քանզի սոքա արծարծեցին զկարգ եւ զարէնդրութիւն մեծին Սահակայ՝ քոյին նախնւոյն, եւ վանս նորագոյնս շինեալ բազումս եւ զաւերեալսն նորոգեալ, եւ այս անթիւս»[74]: Շարունակելով՝ հեղինակն այս հատուածը եզրափակում է՝ ասելով. «Յայսմ հայրենի զարմէ եւ դու, ո՛չ միայն ազգաց հայր եւ թագաւոր յերկրի, այլ եւ թագաւորեալ յերկինս»[75]:

Այս նամակն ակներեւօրէն ցոյց է տալիս, որ Գրիգոր Մագիստրոսի համար շատ կարեւոր էր տոհմաբանական խնդիրը, որն ինչպէս շուտով կը տեսնենք, սոսկ փառասիրական հակում չէր:

Վերադառնալով Անիի կացութեանը՝ պէտք է նշենք, որ այստեղ անսպասելիօրէն ծանր վիճակի առաջ է յայտնւում Պետրոս կաթողիկոսը: Իասիտէսի՝ Դուինի ամիրայի դէմ կատարած ձախողուած արշաւանքից յետոյ նրան փոխարինում է

67 Այս շատ հետաքրքրական նամակից երեւում է, որ Գագիկ Բ-ի եւ Գրիգոր Մագիստրոսի թշնամութիւնը դեռ շարունակւում էր: Զատազանց խօսուն է աւարտական հատուածը. «Ո՞չ գիտես, զի համբերեցի այսքան ժամանակ: Զիս համալուծ առնես որդւոյդ խեղկեալ խարբի, որ հազարաց եւ բիւրոց ընդդէմ եդեալ են թշնամեաց եւ պետաց: Ո՞չ գիտես, եթէ երկնչիմ յԱստուծոյ, տակաւին խոցոտես զիս եւ ոչ երկնչիս յԱստուծոյ ամենակալէն այն, որ նստին ի քերովբէս: Հրաչեալ մոռացեալ եղեւ, Վաղարշակ ոչ յիշեցաւ, Շամբաթ եւ Ասուդ ոչ յիշին, Հայկն թաքչի, Խոսրով զետեղի, Պարթեւն նուազի, Բեռուրա յափշտակի, եւ այդ յերկարեն: Ե՛կ տէր իմ՝ Վասպուրականին եւ Տարաւնոյ եւ Մանազկերտի, Արճիշոյ, Բերկրոյ, Միջագետաց տէր եւ Մաւնումախին մագիստրոս, վեստ եւ տուկ, ի խարբի որդւոյդ ի գանգատ գնա՛: Զէ, մի՛ աւատայք: Բայց յԱստուծոյ երկնչիմ յայն, յոր յուսամ, որում երկրպագեմ: Դաւիթ իւր լու եդ անուն եւ մեռեալ շուն, մինչեւ Աստուած ետես եւ այց արար: Եւ ես ներեմ եւ աղաչեմ, որ ձեզ կեանք տայ եւ բարի միտս: Ողջ լի՛ք» (*Մատենագիրք Հայոց*, հտ. ԺԶ, էջ 336): Գրիգոր Մագիստրոսի թղթերի երկու հրատարակութեան մէջ էլ «Խարբի»-ն որպէս յատուկ անուն է նշուած (*Գրիգոր Մագիստրոսի թղթերը*, էջ 212-213): Հ. Աճառեանը նկատում է, որ այն (խարբ) «հասարակ անուն է եւ նշանակում է անասակ» (Հ. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան*, հտ. Բ, Երեւան, 1944, էջ 502):

68 Գ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պոռշեանք Հայոց պատմութեան մէջ*, էջ 312:

69 Տե՛ս *Մատենագիրք Հայոց*, հտ. ԺԶ, էջ 85, ծան. 4:

70 *Մատենագիրք Հայոց*, հտ. ԺԶ, էջ [illegible]

71 *Մատենագիրք Հայոց*, հտ. ԺԶ, էջ 63:

72 Սամուէլ Անեցին միակ հեղինակն է, ով թէեւ շատ հակիրճ, բայց գրում է բիւզանդացիների մուտքից յետոյ քաղաքում տիրող խուճապային մթնոլորտի մասին, երբ քաղաքացիներն ու իշխանները փոխադարձ մեղադրանքներով, զրպարտանքներով ու նենգութեամբ միմեանց կայսեր ձեռքն էին մատնում, եւ այդ բանսարկութիւնների ծիրի մէջ էր նաեւ կաթողիկոսը: Այդ ամէնից օգտուելով՝ բիւզանդացիները շատերին արտաքսում էին երկրից (Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, էջ 186-187, 395):

73 *Մատենագիրք Հայոց*, հտ. ԺԶ, էջ 259:

74 Նոյն տեղում, էջ 261:

75 Նոյն տեղում, էջ 262:

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

Կատակալոն Կեկաւմենոսը, ով բացայայտում է բիւզանդական զաւթողական քաղաքականութեան իրական դէմքը եւ, վկայակոչելով կայսերական հրամանը, քաղաքից հեռացնում է Պետրոսին. «...խաբանօք հանէ զնա ի քաղաքէն, ասելով եթէ հրամայեալ է քեզ թագաւորն տեղի բնակութեան ի Կարին գաւառի յԱրծին աւանի»[76]: Փաստօրէն, Գագիկ Բ-ին զահից զրկելուց եւ Անին զաւթելուց յետոյ բիւզանդացիները ձեռնարկեցին Հայոց կաթողիկոսութիւնը կազմալուծելու գործը, որի առաջին քայլը կաթողիկոսին աթոռանիստ վայրից հեռացնելն էր:

Պետրոսը կանխազգում էր, որ կարող է այլեւս իրեն թոյլ չտուրի Անի վերադառնալ, ուստի կաթողիկոսական օծում ստացած Խաչիկին թողնում է քաղաքում, նաեւ գաղտնի մեռոն է օրհնում եւ թաքցնում, որ բիւզանդացիների ձեռքը չընկնի[77]: Դրանից յետոյ Պետրոսը հանդիսաւոր շքախմբով ուղեւորւում է Արծն: Սակայն արդէն մայրաքաղաքից հեռացած կաթողիկոսի հետ յոյները վարւում են առանց այլեւայլութիւնների: Ըստ Լաստիւերցու՝ Արծնում Աստուածայայտնութեան տօնի օրը (1047 թ. յուն. 6) «հասին կալանաւորք»՝ Պետրոսին տանելով Կարինի բերդերից մէկը: Նաեւ անմիջապէս նրա քրոջ որդի Խաչիկին էլ Անիից բերում են Սեւ Քար կոչուող բերդը: Նրանց արգելափակուած են պահում մինչեւ Զատիկ (1047 թ. ապրիլ), որից յետոյ տանում են Կոստանդնուպոլիս:

Կայսրութեան մայրաքաղաքում Պետրոսին պատշաճ ընդունելութեան են արժանացնում: Նա այստեղ պատուաւոր աքսորականի վիճակում մնում է երեք տարի: Ի վերջոյ Ատոմ Արծրունու միջնորդութեամբ Պետրոսն իրաւունք է ստանում հեռանալ Կոստանդնուպոլսից, եւ նրան թոյլատրւում է հաստատուել Սեբաստիայում, որտեղ մնում է մինչեւ կեանքի վերջը: Ըստ էութեան՝ բիւզանդացիները Հայոց կաթողիկոսի հետ վարւում են այնպէս, ինչպէս մինչ այդ վարուել էին հայկական մեծ ու փոքր թագաւորութիւնների տիրակալների հետ՝ նրանց հեռացնելով սեփական կալուածքներից ու բուն երկրից: Վարդան Արեւելցու դիպուկ ձեւակերպմամբ՝ բիւզանդացիները վերացրին Անիի երկու պսակները՝ կաթողիկոսական եւ թագաւորական գահերը. «Յոյնք... վերացուցին ի նմանէ (Անիից – Կ. Մ.) զերկուսին պսակն՝ զգահ հայրապետութեան եւ զթագաւորութեան...»[78]:

Պետրոսի մահից յետոյ (1054 թ.) աթոռն անցնում է Խաչիկ Անեցուն, ում բիւզանդացիներն այդպէս էլ թոյլ չեն տալիս ոտք դնել հայրենի քաղաք եւ անցնում են բացայայտ հալածանքների[79]: Նրանք նախ Խաչիկ Անեցուն Սեբաստիայից տանում են Կոստանդնուպոլիս, ապա կողոպտում այնտեղ եւ Անիում գտնուող կաթողիկոսարանի գանձերը, անգամ ոմանց կտտանքների են ենթարկում՝ Պետրոսի գանձերի տեղն իմանալու համար[80]: Յոյներն աննախադէպ ճնշում են գործադրում Խաչիկ կաթողիկոսի վրայ՝ դաւանաբանական ու նիւթական պահանջներ ներկայացնելով: Հայ ազնուականութեան ջանքերով յաջողւում է նրան դուրս բերել կայսրութեան մայրաքաղաքից եւ բնակութեան տեղ ապահովել Փոքր Հայքում՝ Թաւբլուրում: Մի քանի տարի այստեղ բնակուելուց եւ 1064 թ. Անիի՝ սելջուկեան գրաւման ու աւերման կսկիծն ապրելուց յետոյ Խաչիկ Անեցին վախճանւում է 1065

76 *Մատենագիրք Հայոց*, հտ. Ժ.Զ, էջ 262:

77 Մատթէոս Ուռհայեցի, էջ 114:

78 Վարդան Արեւելցի, *Տիեզերական պատմութիւն* (գրաբար տեքստը ըստ Վենետիկի 1862 թ. տպագրութեան), Երեւան, 2001, էջ 104:

79 Այս մասին տե՛ս Կ. Մաթեւոսեան, *Անի*, էջ 44-47, 193-195:

80 Արիստակէս Լաստիւերցի, էջ 82. Մատթէոս Ուռհայեցի, էջ 150:

թ.: Դրանից յետոյ բիւզանդացիները դիմում են ծայրայեղ քայլի. Հայոց կաթողիկոսութիւնն ընդհանրապէս վերացնելու համար արգելում են նոր կաթողիկոսի ընտրութիւնը: Մի յիշատակարանի համաձայն՝ Կարսի վերջին թագաւոր Գագիկ Աբասեանը կաթողիկոսական ընտրութեան թոյլտուութեան համար Բիւզանդիային է յանձնում իր թագաւորութիւնը[81]: Այլ աղբիւրներում նշւում է նաեւ նրա դստեր՝ Մարիամի՝ այդ ուղղութեամբ թափած ջանքերի մասին:

ԺԱՄԱՆԱԿԻ ՎԱԽՃԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ ԵՒ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԾՐԱԳԻՐԸ

Մեր քննած ժամանակաշրջանի բնորոշ յատկանիշներից մէկը Քրիստոսի Ծննդեան եւ Խաչելութեան 1000-ամեակի լրման հետ կապուած վախճանաբանական մթնոլորտն էր, որը քրիստոնեայ հաւատացեալ ժողովրդի վրայ մեծ ազդեցութիւն էր գործում ռամիկից մինչեւ թագաւոր: Աշխարհի մօտալուտ կործանման հին կանխատեսումներին աւելանում էին նորերը:

Անիում այս միտումներն արտայայտւում էին առաւել ակնառու կերպով: Գագիկ Ա թագաւորը քաղաքում կառուցում է Ս. Գրիգոր (Գագկաշէն) մեծադիր եկեղեցին Քրիստոսի Ծննդեան 1000-ամեակի առիթով («յայնմ ժամանակի, յորում լնոյր լրութեամբ ամն Ռ (1000) մարմնանալոյ կամ մարդանալոյ Տեառն մերոյ...»)[82]: Նրա կինը՝ Կատրամիդէն, մի քանի տարի անց Անիում աւարտում է Սմբատ Բ-ի հիմնադրած Կաթողիկէն (Մայր տաճարը), իսկ թագաւորութեան նշանաւոր իշխանները նոյն շրջանում ջանադրաբար խոշոր վանքեր են հիմնադրում ու եկեղեցիներ կառուցում:

Վախճանաբանական տրամադրութիւնները, սակայն, ունենում են նաեւ այլ արդիւնք: Օրինակ՝ Վասպուրականի թագաւոր Սենեքերիմը տարուած էր զանազան մարգարէութիւններով, իսկ երբ սկսւում է թուրքական ցեղերի ներխուժումը, նա խոր տրամութեան մէջ է ընկնում՝ քննելով մարգարէների եւ վարդապետների գուշակութիւնները, կատարուածը համարում է գրքերում գրուած տեսիլների եւ գուշակութիւնների իրականացում եւ եզրակացնում, որ դա երկնային պատիժ է, որի առջեւ անզօր են: Ուստի որոշում է երկիրը յանձնել բիւզանդացիներին ու գաղթել Սեբաստիա[83]:

Դրանից որոշ ժամանակ անց քաղաքական ճգնաժամի մէջ գտնուող Անիում վախճանաբանական տրամադրութիւնների խորացման առիթ են դառնում երկու անգամ տեղի ունեցած արեւի խաւարումն ու երկրաշարժը, որոնք ընկալւում են որպէս մօտալուտ դժբախտութիւնների նախանշան: Ինչպէս վերը նշեցինք, Անիի արքունիքում, ցանկանալով իմանալ կատարուածի իմաստը, դիմում են Յովհաննէս Տարօնացի Կողեռն վարդապետին: Պահպանուել է նրա տեսիլքի բնագիրը՝ «Պատմութիւն նշանաց, որ եղեն ի գուշակս առաջիկա աւուրցն, որ կատարեցաւ, ասացեալ սուրբ վարդապետին Յոհաննիսի Կողռան՝ հայոց վարդապետի», որը որոշ խմբագրմամբ մէջբերում է նաեւ Մատթէոս Ուռհայեցին[84]: Դրանում նշուած է 1030 թուականը, եւ ասւում է, որ Անիից գնացած իշխանները տեսնում են նրան գետնատարած ողբալիս, որից յետոյ վար-

81 «Արքայն Գագիկ մեծաւ ջանիւ գուն գործեալ եւ բազում ինչս ծախեաց եւ զԿարս քաղաք իւր գաւառաւն Յունաց տուեալ... եւ ապա կարաց խափանել զկամս նոցա եւ էառ ի նոցանէ հրաման հաստատել հայրապետ Հայոց» (Գ. Յովսէփեան, *Յիշատակարանք ձեռագրաց*, հտ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 419:

82 Ստեփանոս Տարօնեցի Ասողիկ, *Պատմութիւն տիեզերական*,- Մատենագիրք Հայոց, հտ. ԺԵ, Երեւան, 2011, էջ 827:

83 Մատթէոս Ուռհայեցի, էջ 54-57:

84 *Մատենագիրք Հայոց*, հտ. Ժ.Զ, էջ 79-82:

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

դապետը ներկայացնում է իր չարագուշակ կանխատեսումները (որ արձակուել են սատանայի կապանքները՝ «զոր կապեալ էր Քրիստոս իւր սուրբ մկրտութեամբն» եւ այլն): Վարդապետը չի մոռանում նաեւ քննադատել իր ժամանակի բարքերն ու անարդարութիւնները[85]:

Յովհաննէս Կոզեռնն առիթ ունեցաւ երկրորդելու իր գուշակութիւնները երեք տարի անց՝ Քրիստոսի Խաչելութեան 1000-ամեակին: Այդ ժամանակ Սեւան մեկնած իշխանների մէջ յիշւում է նաեւ Գրիգոր Մագիստրոսը (այդ մասին նշել ենք վերեւում): Յատկանշական է, որ Յովհաննէս Կոզեռնի մոայլ կանխատեսումները խոր հետք են թողել Յովհաննէս Սմբատ թագաւորի վրայ[86]:

Հասկանալի է, որ այս մթնոլորտի մէջ գտնուելով՝ Գրիգորը նոյնպէս պիտի ազդուէր նմանօրինակ գուշակութիւններից: Հայ իրականութեան մէջ այդպիսի հիմնական տեսիլքներից մէկը՝ Գրիգոր Լուսաւորչի տոհմից սերող վերջին կաթողիկոս Սահակ Պարթեւի (387-436 թթ.) տեսիլքն է: Դրա մէջ, գալիք դժբախտութիւնների ներկայացումից բացի, նաեւ մարգարէութիւն է արւում հեռաւոր ապագայի մասին, որի մեկնութիւնը հետեւեալն է. Արշակունիների թագաւորութիւնն ու Գրիգոր Լուսաւորչի տոհմից հայրապետութիւնը պիտի դադարեն գոյութիւն ունենալուց, սակայն Հայոց աշխարհում փոթորիկների անցնելուց յետոյ կրկին Արշակունի տոհմից մէկը թագաւոր է դառնալու, եւ հայրապետական աթոռին նստելու է Գրիգոր Լուսաւորչի շառաւղից մէկը. «...դարձեալ յառնէ թագաւոր յազգէդ Արշակունեաց եւ նորոգի աթոռ հայրապետութեան ի շառաւեղէ սրբոյն Գրիգորի»[87]:

Գրիգոր Մագիստրոսն անկասկած ծանօթ էր այս մարգարէութեանը: Աւելին, այն յիշատակում է իր ծրագրային նամակներից մէկում (թուղթ ԺԸ), որտեղ Սարգիս Անեցուն ծանօթացնում է իր նպատակներին: Նամակը գրուել է Գագիկ Բ-ի հետ գժտութեան շրջանում (հաւանաբար՝ 1043 թ.): Մեզ հետաքրքրող հատուածի սկզբում Գրիգորը նշում է, որ թէեւ կարծես աշխարհի վերջը մօտեցել է՝ ըստ Դանիէլի մարգարէութեան, Սահակ (Իսահակ) Պարթեւի տեսիլքի կամ Մովսէս Խորենացու ողբի, բայց ինքն իր կարողութեան չափով ջանք է թափել երկրի միասնութիւնը պահպանելու («ցանկակարկատ» լինելու) համար, եւ ի հակադրութիւն պառակտող խրամատողների, փորձել է երկրի համար խնամակալ՝ հոգացող լինել: «Թէեւ ի վախճան ժամանակի հասեալ հանդիպեցաք, ըստ մարգարէութեանն Դանիէլի, եւ կամ ըստ մերոյն տեսլեանն Իսահակայ սրբոյ եւ քահանայապետի, կամ ըստ սրբազանին Մովսէսի յիւրում սքանչելի տախտակի մարգարէական տառի, զողբս ի վերայ Հայաստանեայցս առնելով, սակայն, ըստ իմում կարի, ոչ անտեղի տեսի սուղ ինչ ցանկակարկատ լինել, քանզի զայսոսիկ որ խրամատենն, քանզի՝ «որ քակէ զցանկ հայրենի, աւձ հարցէ զնա» (Ժող. Ժ 8), ըստ սատուածայնոյն մարգարէութեան տեսողի

85 *Մատենագիրք Հայոց*, հտ. ԺԶ, էջ 80-81:

86 Այս եզրակացութեանն է յանգում Էդդա Վարդանեանը Յովհաննէս Սմբատի՝ Հոռոմոսի վանքում 1038 թ. կառուցած Ս. Յովհաննէս եկեղեցու դամբարան-ժամատան գմբէթի մի մեծարժէք քանդակապատկերի ուսումնասիրութեամբ, որը բարդ յօրինուածք է՝ վախճանաբանական թեմայով, ու նաեւ հակաբիւզանդական ուղերձ է պարունակում: Յօդուածը տպագրուելու է Հոռոմոսի վանքին նուիրուած *Monastery of Horomos: Art and History* (ACHCByz, Paris) գրքում այս տարեվերջին:

87 **Ղազար Փարպեցի**, *Պատմութիւն Հայոց*.- *Մատենագիրք Հայոց*, հտ. Բ, Ամթիլիաս, 2003, էջ 2232: Տե՛ս նաեւ՝ **Գ. Մուրադեան**, *Սահակի տեսիլը Ղազար Փարպեցու «Պատմութեան» մէջ*.- Լեւոն Խաչիկեան 90, Նիւթեր ծննդեան 90-ամեակին նուիրուած միջազգային գիտաժողովի, Երեւան, 2010, էջ 193-201:

եւ սակս այս ես ոչ խրամատել փութացայ, այլ խնամակալել»[88]:

1045 թ. յետոյ Հայաստանն արդէն յայտնուել էր միանգամայն նոր իրողութեան առջեւ. Անիում վերացած էր թագաւորութիւնը, երկրից հեռացուած ու մեկուսացուած էր կաթողիկոսը, կազմալուծուած էր ազնուականական զինուժը: Վախճանաբանական մոայլ կանխատեսումները կարծես իրականութիւն էին դարձել: Բայց, ինչպէս երեւում է, Գրիգոր Մագիստրոսը հաւատացել է Սահակ Պարթեւի տեսիլքի իրականացմանը՝ Պահլաւունեաց տոհմից նոր կաթողիկոսի ի յայտ գալուն, եւ փորձել է նպաստել այդ կանխատեսման կատարմանը: Թերեւս այս է պատճառը, որ Անի-Շիրակից հեռու գտնուելով՝ նա որոշակի մասնակցութիւն է ունենում այնտեղ ծաւալուող եկեղեցական կեանքին: Յայտնի է, որ նա այս շրջանում կայսերական ոսկեկնիք հրովարտակներով առանձնաշնորհումներ է ձեռք բերում Մարմաշէնի եւ Կեչառիսի վանքերի համար[89], նամակագրական կապ պահպանում իր նախկին աշակերտների, վանական յայտնի միաբանութիւնների եւ հեղինակաւոր հոգեւորականների հետ, դպրոց բացելու երաշխաւորութեամբ Գրիգոր Հնձացի վարդապետին ուղարկում Կարսի Գագիկ Աբասեան թագաւորի մօտ եւ այլն: Իսկ Տարօնի ամենանշանաւոր Ս. Կարապետի վանքում իր Հրահատ գործակալի ձեռամբ կառուցել է տալիս գլխաւոր եկեղեցու ժամատունը եւ մի եկեղեցի՝ Ս. Գրիգոր անունով[90]: Հայ եկեղեցու միասնականութեանն ուղղուած Գրիգոր Մագիստրոսի ջանքերից պիտի համարել նաեւ նրա կոչտ պայքարը թոնդրակեցիների դէմ: Այս բոլոր գործերը նա կատարում էր արդէն որպէս Պահլաւունի, Գրիգոր Լուսաւորչի տոհմի շառաւիղ, եւ այդպէս էր ճանաչւում ու ընկալւում ամբողջ երկրում:

Գրիգոր Մագիստրոսի թղթերի մէջ կայ կարճ մի գրութիւն, որը նրա պատգամն է որդուն՝ «Առ վեստն Վահրամ, որդին իւր» (թուղթ ՁԴ): Այն եօթը երկար տողերով ծայրակապ է, որոնցից առաջին վեցի սկզբնատառերով յօդւում է ՎԱՀՐԱՄ անունը, իսկ բովանդակութեամբ՝ դրանք դրուատանքի ու խրատի խօսքեր են: Վերջին տողը կարելի է համարել Գրիգոր Մագիստրոսի կտակը որդուն՝ «Եւ փոխարէնս հայցեմ ի քէն զաւանդութիւնն մեր ոչ մոռանալ երբէք եւ զփոյթ սիրոյն առ Քրիստոս Աստուած մեր եւ զլոյս ճրագի նախնւոյն մերոյ ոչ շիջուցանել, զՊարթեւին ասեմ՝ քոյոյ հաւուն»[91]:

Փաստօրէն, Գրիգոր Մագիստրոսը որդուն պատգամում է հայկական աւանդութիւնները երբեք չմոռանալ եւ իրենց նախնու՝ Գրիգոր Լուսաւորչի (որին Վահրամի պապ է կոչում) «ճրագի լոյսը չմարել»: Այս վերջին խօսքերն արդէն որոշակի պահանջ են, քանի որ ճրագը չմարել կամ վառ պահել Գրիգոր Լուսաւորչի պարագայում նշանակում է շարունակել նրա գործը՝ Հայոց կաթողիկոսութեան առաջնորդումը: Որդուն այս պատուիրանը տալուց առաջ Գրիգորն իր հերթին երկարատեւ եւ նպատակամղուած գործունէութեամբ կարողացել էր հայ հանրութեան սեփականութիւնը դարձնել Գրիգոր Լուսաւորչի տոհմից Պահլաւունի կաթողիկոս ունենալու սահակպարթեւեան տեսիլքի գաղափարը: Այդ ծրագրի իրագործումը Գրիգոր Մագիստրոսը չտեսաւ, քանի որ մահկանացուն կնքեց 1056 կամ 1058 թ.:

Վահրամը հաւանօրէն հաշուի առել է հօր ցանկութիւնը, բայց չի բացառւում, որ այնքան էլ հակուած չէր աշխարհական իշխանի հագուստը փոխել կրօնական, թէկուզ՝ կաթողիկոսական հանդերձանքի

88 *Մատենագիրք Հայոց*, հտ. ԺԶ, էջ 296-297:

89 Տե՛ս *Մատենագիրք Հայոց*, հտ. ԺԶ, էջ 328. **Կ. Մաթեւոսեան**, *Անի-Շիրակի պատմութեան էջեր*, էջ 138-149:

90 **Արիստակէս Լաստիւերցի**, էջ 118:

91 *Մատենագիրք Հայոց*, հտ. ԺԶ, էջ 312:

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

հետ: Սամուէլ Անեցու ժամանակագրութեան երկու ձեռագրերում եղած, վերջերս հրատարակուած յաւելումների մէջ ուշագրաւ տեղեկութիւն ենք գտնում Վահրամի՝ հայրապետական աթոռին նստելու մասին. «Տէր Գրիգորիս որդի Գրիգորի Մագիստրոսի թողեալ զհայրենի պատիւն, հետեւեցաւ կրօնաւորութեան եւ բռնադատեալ նստուցաւ յաթոռ հայրապետութեան եւ Վկայասէր անուանեցաւ…»[92]: Միւս, աւելի հանգամանալից տեղեկութեան մէջ որպէս այս ձեռնարկի կազմակերպիչ եւ Վահրամին փնտրող ու համոզող է հանդէս գալիս Կարսի Գագիկ Աբասեան թագաւորի դուստր Մարիամը. «…վտարեցաւ աթոռ հայրապետութեան ի Սեբաստիայ եւ խափանեցին Յոյնք ձեռնադրել կաթողիկոս Հայոց, մինչեւ Մարիամ՝ դուստր թագաւորին Գագկա մեծաւ աղաչանաւք խնդրեաց յարքայէն Հոռոմոց եւ նայ լուաւ աղաչանացն Մարիամու: Եւ առաքեաց Մարիամ, խնդրեաց եւ եգիտ զԳրիգորիս՝ զորդի Գրիգորի Մագիստրոսի՝ Պահլաւունի ազգաւ: Սա թողեալ զհայրենի պատիւն, կրաւնաւորութեան հետեւեցաւ եւ բռնադատեալ զսա բազում աղաչանաւք նստուցին յաթոռ հայրապետութեան»[93]:

Այս ամէնից կարելի է եզրակացնել, որ Գրիգոր Մագիստրոսն այնքան հիմնաւոր հող էր նախապատրաստել Վահրամի կաթողիկոսացման համար, որ նրան այլ բան չէր մնում, քան, անգամ հօր մահից շուրջ 10 տարի անց, ենթարկուել նրա կամքին, քանի որ այն արդէն դարձել էր նաեւ հանրային պահանջ: Այս ամէնի եկեղեցաբանական հիմնաւորումն էլ ձեւակերպել է Մատթէոս Ուռհայեցին՝ գրելով. «Զսա (Վահրամին – Կ. Մ.) յայտնեաց Հոգին Սուրբ նստել յաթոռ Սուրբ Լուսաւորչի
Գրիգորի՝ նախնոյն իւրոյ…»[94]:

Վահրամը կաթողիկոս դարձաւ 106[…]
թ.՝ օծումից յետոյ Գրիգոր անունը ստա[…]
նալով: Գրիգոր Լուսաւորչից յետոյ ն[…]
երկրորդ կաթողիկոսն էր այդ անունով[…]
Գրիգոր Բ Վկայասէրի ժամանակ (1066-
1105 թթ.) նրա համաձայնութեամբ կաթո[…]
ղիկոսական օծում ստացաւ նրա քրոջ որ[…]
դին՝ Բարսեղ Ա Անեցին[95] (1081 թ.), ո[…]
Գրիգոր Բ-ից յետոյ ժառանգեց աթոռ[…]
(1105-1113 թթ.), բայց նաեւ մահուա[…]
մահճում գտնուող Վկայասէրի պատուի[…]
րանը ստացաւ, թէ իրենից յետոյ ում պ[…]
տի կաթողիկոսական գահը փոխանցի[…]
Վկայասէրը Բարսեղի հոգեւոր խնամքի[…]
յանձնեց իր միւս քրոջ (եւ իշխան Ապիրա[…]
տի) որդի Գրիգորին՝ յանձնարարելով, ո[…]
յաջորդ կաթողիկոսը նա պիտի դառնայ[96]
Երբ 1113 թ. մի դժբախտ պատահարի հ[…]
տեւանքով Բարսեղ Անեցին մահացա[…]
վնասուածք ստացաւ, յիշեալ Գրիգորը դ[…]
շատ երիտասարդ էր (Մատթէոս Ուռհայե[…]
ցու խօսքերով՝ «ի տղայութեան հասակի[…]
ն»)[97], սակայն վերջինիս Պահլաւունի լ[…]
նելն ու Վկայասէրի կամքն այնքան զօրե[…]
ւոր նկատուեցին, որ նախ Բարսեղի ձեռ[…]
քով եպիսկոպոսական ձեռնադրութի[…]
ստացաւ, իսկ կաթողիկոսի մահից յետոյ[…]
այդ վաղ տարիքում արժանացաւ կաթողի[…]
կոսական օծման:

Հայ եկեղեցու պատմութեան մէջ ա[…]
նախադէպ երկար՝ 53 տարի գահակալա[…]
եւ Գրիգոր Գ Պահլաւունի (1113-1166 թթ[…]
անունով[98] յայտնի այս հայրապետից յ[…]տոյ (որի ժամանակ հաստատուն կաթողիկոսանիստ դարձաւ Կիլիկիայից արեւելք գտնուող Հռոմկլա ամրոցը), առանց յատուկ կաթողիկոսական ընտրութեան, աթոռն անցաւ նրա եղբօրը՝ Ներսէս Դ Շնորհալուն (1166-1173 թթ.), այնուհետեւ՝ սրանց Վասիլ եղբօր որդի Գրիգոր Դ Տղային (1173-1193 թթ.), իսկ նրա մահից յետոյ՝ Վասիլի դստեր որդի Գրիգոր Ե Քարավէժին (1194 թ.): Նոյն տոհմից յաջորդ եւ վերջին կաթողիկոսն էլ Վասիլի եղբայր Զօրավարի որդի Գրիգոր Զ Ապիրատն էր (1194-1203 թթ.)[99]: Հայոց կաթողիկոսական գահին Պահլաւունիների այս ժառանգականութեան շքերթը (որը քննադատւում էր ինչպէս երկրի ներսում, այնպէս էլ այլ եկեղեցիների կողմից), վերջ գտաւ միայն Կիլիկիայի Հայոց առաջին թագաւոր Լեւոն Ա-ի (1198-1219 թթ.) միջամտութեամբ[100]:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ նախ՝ Վահրամ սպարապետի եւ նրա եղբայր Աբլղարիբ մարզպանի միջոցով բարձրաձայնուեց այս տոհմի Պահլաւունի եւ Գրիգոր Լուսաւորչի շառաւիղ լինելու մասին, որն աւելի հիմնաւորուեց ու տարածում գտաւ Գրիգոր Մագիստրոսի ջանքերով: Անիի թագաւորութեան անկումից եւ կաթողիկոսական աթոռի տարագրումից յետոյ, բիւզանդացիների վստահութիւնը վայելող եւ Հայաստանում ազդեցիկ դիրք ունեցող Գրիգոր Մագիստրոսն աւելի նպատակամղուած քայլերի դիմեց կաթողիկոսական աթոռի նկատմամբ Պահլաւունեաց տոհմի յաւակնութիւնն իրականութիւն դարձնելու ուղղութեամբ: Չնայած այդ մտայղացումը կեանքի կոչուեց Գրիգոր Մագիստրոսի մահից յետոյ, սակայն հէնց նրա որդու՝ Վահրամի աթոռակալութեամբ գործադրուեց շատ երկար ժամանակ, ընդհուպ մինչեւ ԺԳ. դարի սկիզբը: Ճիշտ է, Վահրամ-Գրիգոր Վկայասէրի մահից յետոյ կաթողիկոսական աթոռն անցաւ միայն մայրական գծով Պահլաւունիներին (Գրիգոր Մագիստրոսի դստերերի սերունդներին), ովքեր ոչ պատահականօրէն գահակալելիս հիմնականում Գրիգոր անունն էին կրում, սակայն իրողութիւնն այն է, որ վերջիններիս ժառանգական աթոռակալութեան համար գլխաւոր յաղթաթուղթը Պահլաւունի տոհմանունն էր:

---

92 Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, էջ 191: Տեղեկութիւնը Մատենադարանի թիւ 3613 ձեռագրից է:

93 Նոյն տեղում, էջ 190: Տեղեկութիւնը Վենետիկի թիւ 959 ձեռագրից է:

94 Մատթէոս Ուռհայեցի, էջ 168:

95 Բարսեղ Ա Անեցու հայրը Կեչառիսը կառուց[…] Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի որդի Վասա[…] էր, մայրը՝ Գրիգոր Մագիստրոսի դուստրը:

96 Մատթէոս Ուռհայեցի, էջ 326-327:

97 Նոյն տեղում, էջ 360:

98 Հայոց կաթողիկոսները սովորաբար մակ[…] նուանում են ըստ իրենց ծննդավայրի: Գրիգ[…] Գ-ի պատուէրով իր ժամանակագրութիւնը գր[…] Սամուէլ Անեցին նրա ծագման մասին նշու[…] «Վախճանեցաւ տէր Բարսիղ հայրապետն Հայոց, եւ յաջորդէ զաշտիճանն տէր Գրիգորիս մեծաշուք պատուով նստեալ յաթոռ վիճակի Սրբոյն Գրիգորի Հայաստանեայցս լուսաւորչի, որ յազգէ նորուն հարազատութեան ճանաչի» (Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, էջ 203):

99 Տոհմածառը տե՛ս Ն. Ակինեան, նշ. աշխ., ներդիր՝ 402, 403 էջերի միջեւ. Կ. Մաթեւոսեան, *Անի-Շիրակի պատմութեան էջեր*, էջ 137:

100 Այս հարցի կապակցութեամբ ուշագրաւ դիտարկում է կատարել Գրիգոր Մագսուտեանը. «Հայրապետական աթոռի ժառանգական իրաւունքը փրկել է եկեղեցու նուիրապետութիւնը շատ բարդ եւ խճճուած ժամանակաշրջանում: Կիլիկեան թագաւորութեան հաստատումը եւ արքունիքի կողքին եկեղեցական հաստատութեան առաջացումը անգործածական դարձրին հայրապետական աթոռի ժառանգական իրաւունքը» (Գ. Մագսուտեան, նշ. աշխ., էջ 86):

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@